ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ

ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

13

Սեպտեմբեր, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԼՈԲՈՒՍ
Վերլուծական տեղեկագիր

ГЛОБУС
Аналитический бюллетень

№ 13 (21)
Սեպտեմբեր, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի
սցենարների շուրջ 3

Американская экономика на пороге
самого глубокого кризиса XXI века 6

«Հարավային հոսք» և Թուրքիա-Հունաստան գազատար.
պայքար հումքի շուկաների համար 9

Новая эра ядерного противостояния 13

Некоторые оценки и выводы из анализа вызовов и
угроз в регионе Центральной Азии и Кавказа 15

Թուրքիայի նախագահական ընտրությունների
ընկալումն արաբական աշխարհում 21

Թուրք պատմաբանը կրոնափոխ հայերի մասին 24

Армянская община Ростовской области России 28

Հրեական հայրենադարձության փորձից. ալիյա. 1 31

Եկեղեցի-պետություն իրավական
փոխհարաբերությունների շուրջ 35

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՍՑԵՆԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ինչպես հայտնի է, ամերիկյան Կոնգրեսն օրինագիծ է մշակել 2008թ. Պեկինի օլիմպիական խաղերը բոյկոտելու վերաբերյալ՝ հիմնավորելով, թե Չինաստանում խախտվում են ժողովրդավարական նորմերը և մարդու իրավունքները: Ի պատասխան՝ չինացիները զգուշացրել են, թե վաճառքի կհանեն իրենց ունեցած $1.33 տրլն ԱՄՆ պետական փոխառությունները, ինչը կհանգեցնի դոլարի փլուզմանը[1]: Հարկ է հատուկ շեշտել, որ սա առաջին միջադեպն է, երբ ոչ թե Միացյալ Նահանգներն է սպառնում, այլ հենց Միացյալ Նահանգներին են սպառնում տնտեսական պատժամիջոցներով:

«Չինական» միջադեպը, դոլարի արժեզրկման ներկայիս միտումները (բավական է նշել, որ համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատականների՝ դոլարի արժեքը գերագնահատված է 15-35%), ամերիկյան արտաքին պարտքի ($9.0[2] տրլն, ինչը կազմում է ԱՄՆ ՀՆԱ 65,5%) շարունակական աճը և ամերիկյան անշարժ գույքի շուկայում ծագած ճգնաժամային երևույթները դոլարի ապագայի վերաբերյալ տարաբնույթ կարծիքների և փորձագիտական գնահատականների ի հայտ գալու առիթ հանդիսացան:

Ամերիկյան արժույթի ապագայի խնդիրներն արծարծվում են Բրետոն-Վուդյան ֆինանսական համակարգի ձևավորման օրից (1944թ.), երբ ապագա ՄԱԿ-ի մի շարք անդամներ, մասնավորապես, համաձայնության եկան ամերիկյան դոլարը որպես բազային արտարժույթ ընդունելու վերաբերյալ: Դոլարի շուրջ քննարկումներն աշխուժացան հատկապես 1971թ. ֆինանսական-էներգետիկ ճգնաժամից հետո, երբ Միացյալ Նահանգների նախագահի հրամանագրով դադարեցվեց ամերիկյան արժույթի փոխանակումը ոսկու հետ: Համարվում է, որ այդ պահից սկսած՝ դոլարի էմիսիայի մենաշնորհ ունեցող ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը *(Федеральная резервная система - ФРС)* դարձավ երկրագնդի ամենաշահութաբեր ձեռնարկությունը, քանի որ 100 դոլարանոցի արտադրման ինքնարժեքը կազմում է ընդամենը 3 ցենտ:

Նախկինում գոյություն ունեցող ֆինանսական համակարգի վերաբերյալ հոռետեսական սցենարների հեղինակները հիմնականում եվրոպական և ռուսաստանյան փորձագետներն էին (Էմանուել Տոդ, Միխայիլ Դելյագին և այլք): Ներկայումս նման մոտեցումներ ունեն նաև ամերիկացիները. վերջերս Միացյալ Նահանգների ֆինանսական գլխավոր տեսուչ Դևիդ Վոքերը, անշարժ գույքի շուկայում առաջացած հիմնախնդիրների կապակցությամբ, տագնապալի կանխատեսումներ կատարեց ամերիկյան տնտեսության վերաբերյալ և իր երկիրը համեմատեց անկման դարաշրջանի Հռոմեական կայսրության հետ (տե՛ս Մ.Մերգենի և Ա.Բլինովի նյութը):

Այս ամենի առիթով, առանց մանրամասնելու առկա բազմաթիվ իրատեսական և կոնսպիրոլոգիական վարկածները, փաստենք, որ չնայած անբարենպաստ զարգացումներին և դրանց մեկնաբանություններին, ԱՄՆ-ը շարունակում է մնալ ամենահզոր տերությունը: Նրա տնտեսության հզորությունը կազմված է երկու հիմնական բաղադրիչներից. գիտատեխնոլոգիական բարձրակարգ համակարգից և դրա ածանցյալ, առայժմ անգերազանցելի ռազմար-

---

[1] Այս գործընթացը բնորոշ է Նոր սառը պատերազմի տրամաբանությանը և մասամբ կրկնությունն է Արևմուտքի կողմից 1980թ. մոսկովյան օլիմպիադայի բոյկոտման: Սակայն տարբերությունն այն է, որ նախկինում ողջ «Ազատ աշխարհն» աջակցեց ԱՄՆ-ին, և այդ սպորտային միջոցառումը Մոսկվայում, իրոք, որոշ իմաստով թերարժեք էր: Սակայն այսօր, հաշվի առնելով ՉԺՀ տնտեսական հակազդեցության ռեսուրսները և Արևմուտքում համերաշխության բացակայությունը (արևմտյան ընկերությունները բավական խոշոր պատվերներ են ստացել պեկինյան օլիմպիադայի կապակցությամբ, և ամերիկյան նման նախաձեռնությունը կարող է միայն լրացուցիչ հակաամերիկյան տրամադրություններ առաջացնել), որ առայժմ տպավորությունն այնպիսին է, թե Վաշինգտոնը կսահմանափակվի հոգեբանական ճնշումներով և ռեալ քայլերի չի դիմի:

[2] Համաձայն ամերիկյան փորձագետների կողմից մեկ այլ մեթոդով («կորպորատիվ հաշվապահական») կատարած հաշվարկների:

դյունաբերական համալիրից ու այդ ոլորտները սնող ֆինանսական էֆեկտիվ համակարգից: Վերջինիս արդյունավետությունն էապես պայմանավորված է օտարերկրյա խոշոր ներդրումներով (դրանց չափը, համաձայն ԱՄՆ գանձապետարանի տվյալների, հասնում է տարեկան մոտ $0.9 տրլն-ի) և վերը նշված այն հանգամանքով, որ Դաշնային պահուստային համակարգը կարող է «բաց թողնել» անհրաժեշտ քանակությամբ թղթադրամ:

Սակայն որևէ տերության երկարատև առաջատար լինելը դեռևս երաշխիք չէ, թե այդ կարգավիճակը հավերժ է տևելու, և դա առաջին հերթին ըմբռնում է Միացյալ Նահանգների ընտրանին. մասնագիտական գրականությունում կարելի է հանդիպել ամերիկյան «ուղեղային կենտրոններում» մշակված «կայսրության նահանջի» ամենատարբեր սցենարների:

Վերոնշյալի համատեքստում նկատենք, որ ամերիկյան դոլարի հետ կապված զարգացումները նույնքան կարևոր են ոչ միայն ԱՄՆ-ի, այլև մնացյալ աշխարհի, այդ թվում նաև Հայաստանի և նրա գործընկերների համար: Մասնավորապես, գրեթե բոլոր երկրների արժութային պաշարների մի զգալի մասը դոլարով է, և փորձագետները համոզված են, որ ԱՄՆ-ի կողմից դեֆոլտ հայտարարելը ծանր հետևանքներ կունենա և կհանգեցնի համաշխարհային տնտեսական ու քաղաքական, այսինքն՝ համակարգային ճգնաժամի: Ստեղծված իրադրությունում պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ոչ միայն այլ երկրներն են տնտեսապես կախված Միացյալ Նահանգներից, այլև վերջինս արդեն նույնպես յուրօրինակ «պատանդ» է այն երկրների ձեռքին, որոնք կարող են դեֆոլտի հասցնել գերտերությանը՝ անկախ նրա կամքից (ինչպես դա տեսնում ենք Չինաստանի պարագայում): Հատկանշական է, որ նման իրավիճակը կարծես թե տնտեսական կայունության երաշխիքներ է պարունակում. ԱՄՆ-ը և այլ երկրներ ուղղակի պարտադրված են համագործակցել, որպեսզի խուսափեն համընդհանուր համակարգային ճգնաժամից:

Սակայն որոշ փորձագետներ գտնում են, որ այդ տնտեսական կայունությունը փխրուն է, և կան օբյեկտիվ նախադրյալներ, որոնք կարող են խախտել ներկայիս հավասարակշռությունը: Մասնավորապես, վերլուծաբաններ *Ս.Գրինյանը և Ա.Ֆոմինը*[1] ելնում են այն թեզից, որ ամերիկյան արժույթի համեմատական կայունությունը պայմանավորված է ԱՄՆ ռազմական հզորությամբ (հիշենք, որ ԱՄՆ պաշտոնական ռազմական ծախսերը տարեկան կազմում են համաշխարհայինի մոտ 50%-ը) և որ ի տարբերություն այլ երկրների՝ ամերիկյան զինված ուժերի հիմնական նպատակը ոչ թե սեփական երկրի, այլ այն աշխարհակարգի պաշտպանությունն է, որում շրջանառվում է դոլարը: Համարվում է նաև, որ նման իրավիճակը կարող է ապահովել համաշխարհային տնտեսական կայունությունն այնքան ժամանակ, քանի դեռ օտարերկրյա ներդրումներն ամերիկյան տնտեսությունում գերազանցում են վերջինիս ռազմական ծախսերը:

Աղյուսակում ներկայացված ռազմական ծախսերում հաշվի են առնվել ոչ միայն զուտ բանակի և սպառազինության վրա ծախսված գումարները, այլև ռազմական շինարարության, վետերանների սոցիալական ապահովության, Իրաքում և Աֆղանստանում ընթացող պատերազմի, միջուկային զինանոցի սպասարկման և ԱՄՆ տարածքի պաշտպանության համար կատարված ֆինանսական հատկացումները: Այս լրացուցիչ ծախսերի հաշվառման պարագայում 2006թ. ԱՄՆ ռազմական բյուջեն ավելանում է ևս $216.8 մլրդ-ով և կազմում է $669.8 մլրդ, այսինքն՝ ավելանում է մոտ 48%-ով:

Ռազմական ծախսերի աճի հաշվարկման առաջին տարբերակում (հոռետեսական կանխատեսում) ընդունվել է, որ ԱՄՆ պաշտոնական ռազմական բյուջեի և լրացուցիչ ծախսերի աճն ընթանալու է նույն տեմպերով, ինչ 2006-2007թթ.: Երկրորդ տարբերակում (լավատեսական տարբերակ) ընդունվում է, որ տարեկան լրացուցիչ ծախսերն անփոփոխ են մնալու (այսինքն՝ հավասար են լինելու $216.8 մլրդ-ի), և ներկա տեմպերով աճելու է միայն պաշտոնական ռազմական բյուջեն[2]: Օտարերկրյա ներդրումների աճի հաշվարկում ընդունվել են վերջին տարիներին արձանագրված աճի տեմպերը:

---

[1] Իրենց դեռևս չհրապարակված հետազոտության արդյունքներն այդ հեղինակավոր վերլուծաբանները (մասնավորապես՝ գիտությունների դոկտոր Ս.Գրինյանը Ռուսաստանի ապրանքահումքային բորսայի վերլուծական վարչության ղեկավարն է) գործընկերային հիմունքներով տրամադրել են «Նորավանք»-ին:

[2] Օրերս ԱՄՆ նախագահը դիմել է Կոնգրեսին այս ոլորտի ծախսերը ևս $50 մլրդ-ով ավելացնելու մասին:



Ինչպես տեսնում ենք առաջին, այսինքն՝ զարգացումների հոռետեսական սցենարի դեպքում, ռազմական ծախսերը կգերազանցեն ներդրումների չափն արդեն 2010-2011թթ., իսկ երկրորդ տարբեակում՝ 2020-2025թթ.: Այսինքն, եթե ներկայիս միտումները պահպանվեն, ապա համակարգային ճգնաժամը կարող է սկսվել արդեն 3–4 տարուց, իսկ լավագույն դեպքում՝ մոտ 15 տարի հետո:

Ավելացնենք, որ այս պարագայում նույնպես հնարավոր է պատկերացնել լավատեսական և հոռետեսական սցենարներ: Ակնհայտ է, որ ԱՄՆ ղեկավարությունը և այլ առաջատար տերություններ որոշակի միջոցներ են ձեռնարկելու նման զարգացումներից խուսափելու նպատակով: Դրանցից մի քանիսին մենք արդեն ականատես ենք՝ դոլարի արժեզրկում, էներգակիրների գնի աճ և այլն: Չի կարելի նաև բացառել, որ առաջատար տերությունները ԱՄՆ-ի հետ մեկտեղ ձևավորեն նոր տիպի համաշխարհային ֆինանսական համակարգ, ինչպես դա տեղի ունեցավ Բրետոն-Վուդում 1944թ.:

Չի կարելի բացառել, սակայն, նաև «վատ» զարգացումների հնարավորությունը: Նախկինի համեմատ՝ Նոր սառը պատերազմի հիմնական տարբերություններից մեկն է «զսպման» միջազգային մեխանիզմների բացակայությունը, և դա առաջին հերթին վերաբերում է միջուկային զենքի անվերահսկելի տարածմանը: Այսինքն՝ ռազմաքաղաքական որոշ գործընթացներ Մերձավոր և Միջին Արևելքում, Կենտրոնական Ասիայում, Մերձկասպյան և Հարավկովկասյան տարածաշրջաններում կարող են հանգեցնել անվերահսկելի զարգացումների, որոնց պարագայում և՛ ԱՄՆ-ը, և՛ նրա ընդդիմադիրները՝ ի դեմս Չինաստանի և Ռուսաստանի, կարող են գործել առանց «խաղի կանոնների». այսինքն՝ երկուստեք գործի կդրվեն բոլոր, այդ թվում նաև տնտեսական պատերազմի, ռեսուրսները, և այդ պարագայում խոսել արտարժույթի շուրջ «համագործակցության» մասին՝ լուրջ չի լինի:

Գագիկ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

АМЕРИКАНСКАЯ ЭКОНОМИКА НА ПОРОГЕ САМОГО ГЛУБОКОГО КРИЗИСА XXI ВЕКА[1]

Мировая финансовая система вновь оказалась перед угрозой потери стабильности. В начале октября правительство США окажется в состоянии технического дефолта по своим обязательствам, если Конгресс срочно не разрешит повысить порог внешнего долга страны. При любом развитии событий Россия проиграет.

В случае дефолта будет заморожена почти половина золотовалютных резервов (ЗВР) нашей страны, оцениваемых в $413 млрд. Если же Конгресс позволит правительству США еще больше раздуть и так достигающий почти $9 трлн государственный долг, то в очередной раз обесценит не только сам доллар, но и долларовую составляющую ЗВР России и других стран.

Новые долги либо дефолт

«Я прошу Конгресс поднять потолок государственного долга как можно быстрее», – подчеркнул министр финансов США Генри Полсон в письме к конгрессменам. По словам Полсона, если законодатели должным образом не прореагируют на просьбу Минфина, то в начале октября правительство впервые окажется в состоянии технического дефолта. Это связано с тем, что долг американского государства приближается к установленной год назад предельной отметке – $9 трлн.

Глава казначейства, как в США называют министра финансов, направил свой запрос в Капитолий в тот момент, когда он вел переговоры в Китае, прямо связанные с положением американского доллара. Он просил китайцев повысить обменный курс китайской валюты в сравнении с американской и тем самым облегчить проблему платежей, с которой столкнулись США. Это, в свою очередь, призвано облегчить бремя национального долга.

Нынешняя администрация президента США Джорджа Буша начинала свою деятельность с ожидания превышения государственных расходов над доходами, однако в действительности она оказалась в плену бюджетного дефицита. Это связано с резко возросшими расходами на обеспечение внутренней безопасности США и особенно – затратами на иракскую войну. В результате почти каждый год Конгресс США был вынужден при рассмотрении бюджетных законопроектов повышать потолок национального долга. Нынешний потолок закреплен законом на уровне $8,965 трлн, то есть около 65,5% американского ВВП. Для сравнения – в 2001г. госдолг США составлял около 57%, а в 1996 году – более 67% ВВП.

Отказа не будет

Какова судьба нынешнего обращения Минфина к Конгрессу? По словам эксперта международной консалтинговой компании «Глобал Инсайт» (Лондон) Яна Рэндолфа, Конгресс как орган, контролирующий федеральные финансы, имеет конституционное право удовлетворить просьбу администрации, отказать ей либо поставить свои условия. Однако отказ маловероятен. Хотя бы потому, что превышение расходов над доходами связано с войной в Ираке и недавним повышением численности американских войск в этой стране. Законодатели хотят избежать обвинений в том, что они подвергают военных риску.

---

[1] «Независимая газета», 01.08.2007.

Как считает Рэндолф, запрос Минфина дает основания считать, что Белый дом опасается снижения доходов госбюджета. Это связано, в частности, с проблемами американской финансовой системы, вызванными кризисом ипотечной системы и растущей нагрузкой на пенсионные фонды. Иначе говоря, внутренний прогноз администрации ориентирован на снижение экономического роста.

В нынешних условиях, по мнению аналитика, важное значение для стабильности американских федеральных финансов будет иметь поведение международных партнеров США. Для Вашингтона крайне важно, чтобы страны с избытком валюты, в частности Китай, Япония и Россия, продолжали покупать в больших объемах долговые обязательства США. В то же время ему не на руку их попытки найти более эффективное и выгодное использование лишних средств.

«Вряд ли США решатся объявить технический дефолт и пропустят выплаты по гособлигациям, поскольку это нанесет серьезный ущерб доверию к доллару, который потеряет свой статус инфраструктурной валюты», – считает старший оценщик отдела финансов компании «2К Аудит – Деловые консультации» Илья Блюхер. Все катаклизмы американской экономики так или иначе влияют на мировую экономику, куда входит и российская. «В частности, кризис на рынке ипотечных долгов и их страхования в США ознаменовал конец эпохи дешевых кредитов, и инвесторы пересматривают свои финансовые риски», – говорит Илья Блюхер. Обеспокоенность на рынке подогревали и растущие цены на нефть. Этот кризис, по словам эксперта, вызвал снижение котировок на европейских, азиатских и российских рынках. «В результате многие российские компании отказались или отложили размещение евробондов и других ценных бумаг, что в конечном итоге снизит объем инвестиций в экономику», – отмечает Блюхер.

Непомерные запросы США оплатит весь мир

Увеличение американского госдолга влияет на Россию, по мнению экономистов, прямо и опосредованно. Прямое влияние состоит в том, что в случае дефолта по казначейским обязательствам Россия лишится текущих дивидендов и потеряет значительную часть резервов, которые номинированы в долларах. Опосредованно долговой кризис в США ударит по России через ухудшение экономической ситуации в странах – торговых партнерах, которые в большей степени, чем Россия, зависят от американской экономики.

«Растущий американский долг – это очень неприятная тенденция, которая обесценивает валютные резервы других стран и заставляет их поддерживать дефицит госбюджета США», – считает научный руководитель Высшей школы экономики Евгений Ясин. По его словам, увеличение госдолга США ведет к ослаблению доллара и соответственно к усилению рубля, что отрицательно влияет на конкурентоспособность многих российских предприятий. Однако скорых изменений тенденции ослабления доллара ожидать не приходится. «Безответственная финансовая политика американской администрации», по словам Ясина, сохранит «напряжение в мировой финансовой системе даже в долгосрочной перспективе».

«Предстоящее увеличение порога госдолга – это чисто технический момент, который поможет Минфину США выпустить новые облигации для финансирования старых, однако саму проблему растущего долга США никак нельзя назвать технической», – считает старший экономист «Уралсиба» Владимир Тихомиров. По его словам, США скорее всего продолжат увеличивать госдолг и в будущем, пока состояние американской экономики будет обнадеживать иностранных инвесторов и иностранные правительства. «Увеличение американского госдолга говорит о том, что находятся инвесторы, которые верят в платежеспособность США и готовы покупать их ценные бумаги», – говорит Тихомиров. Между тем центробанки других стран в значительной степени являются вынужденными инвесторами в долларовые бумаги. «Европа и

страны Азии не заинтересованы в глобальном финансовом кризисе, и поэтому центробанки этих стран постараются поддержать США, выкупив их новые обязательства», – говорит Тихомиров. Тем не менее многие банки целенаправленно снижают долю американских ценных бумаг в своих резервах. «Доллар занимает сегодня около 49% валютных резервов России, тогда как в 2002г. на долю американской валюты приходилось около 80% резервов», – отмечает Тихомиров.

Михаил Сергеев
Артур Блинов

«ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀՈՍՔ» ԵՎ ԹՈՒՐՔԻԱ-ՀՈՒՆԱՍՏԱՆ ԳԱԶԱՏԱՐ. ՊԱՅՔԱՐ ՀՈՒՄՔԻ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերջին ամիսներին տեղի ունեցող զարգացումներն էներգետիկ ոլորտում տրամաբանական շարունակությունն են այն ակտիվ պայքարի, որը ծավալվում է Ռուսաստանի և Արևմուտքի միջև Կասպյան և Կենտրոնական Ասիայի գազի պաշարների արտահանման նկատմամբ վերահսկողություն սահմանելու ուղղությամբ: Հունիս և հուլիս ամիսներն այս տեսանկյունից աչքի ընկան Հարավեվրոպական և Թուրքիա-Հունաստան-Իտալիա գազատարների կառուցման վերաբերյալ երկու կարևոր համաձայնագրերի ստորագրմամբ:

«Հարավային հոսք»

2007թ. հունիսի 23-ին ռուսական *«Գազպրոմ»* և իտալական *«Էնի»* ընկերությունները համաձայնագիր ստորագրեցին Հարավեվրոպական գազատարի կառուցման մասին, որը տեղեկատվական և վերլուծական դաշտում ավելի մեծ ճանաչում ստացավ «Հարավային հոսք» անվամբ: 900կմ երկարությամբ այս գազատարը պետք է անցնի Սև ծովի ափերով՝ Ռուսաստանից մինչև Բուլղարիա, իսկ բուլղարական տարածքում այն պետք է բաժանվի երկու առանձին գազատարների, որոնցից մեկը կուղղվի դեպի Սլովենիա և Ավստրիա, իսկ մյուսը՝ դեպի Իտալիա: Ենթադրվում է, որ գազատարը կսկսի աշխատել 3 տարի հետո, հզորությունը կկազմի մինչև 30 մլրդ մ^3:

Ռուսաստանը գազատարի կառուցմամբ լուծում է հիմնականում մի քանի կարևոր քաղաքական և տնտեսական նշանակության խնդիրներ: Դրանք են.

- Ռուսաստանը բավական գրավիչ տնտեսական և կառուցվածքային հիմք է ստեղծում, որպեսզի նրա տարածքն օգտագործվի ղազախական, ուզբեկական և թուրքմենական գազի արտահանման համար:
- Ռուսաստանը նվազեցնում է կախվածությունն Ուկրաինայից և նրա տարանցման քաղաքականությունից:
- Եվս մեկ կարևոր հիմք է ստեղծվում Բուլղարիայի հետ համագործակցության խորացման համար, միևնույն ժամանակ, Ռուսաստանն ամրապնդում է Արևելյան Եվրոպայի երկրների էներգետիկ կախվածությունն իրենից:
- Ռուսաստանը կարևոր քայլ է կատարում Իտալիայի գազի շուկայի գրավման համար, որն ամենավճարունակն է Եվրոպայում:

Նշենք նաև բավական կարևոր մի գործոն ևս, որը կարծես թե առկա է նախագծի իրագործման շրջանակներում ձևավորված ռուսական շահերի առումով. «Գազպրոմը» բավական եռանդուն կերպով ցանկանում է Սերբիան ընդգրկել նախագծի իրագործման ծրագրի մեջ՝ դեպի Սլովենիա և Ավստրիա գնացող գազատարի մի մասն անցկացնելով հենց Սերբիայի տարածքով:

Ֆինանսապես և աշխարհագրականորեն նման հեռանկարն այնքան էլ շահավետ չէ Մոսկվայի, Բրատիսլավայի և Վիեննայի համար, սակայն ՌԴ նախաձեռնությամբ կարծես թե հենց Մոսկվային քաղաքականապես ձեռնտու սերբական ճանապարհն է օգտագործվելու գազատարի կառուցման համար:

Հատկանշական է, որ «Հարավային հոսք» նախագծի մշակումից, քննարկումից մինչև համաձայնագրի ստորագրումը ընդամենը մեկ տարի է անցել: Կարճ ժամանակահատվածում կարևոր էներգետիկ նշանակության համաձայնագրերի ստորագրումը միանգամայն նոր

երևույթ է միջազգային էներգետիկ հարաբերություններում. բոլոր շատ թե քիչ նմանատիպ նախադեպերը կապված են հենց Ռուսաստանի հետ. Հարավեվրոպական գազատար, Մերձ-կասպյան գազատար և այժմ արդեն՝ «Հարավային հոսք» գազատար: Սա արդյունք է ոչ միայն այն բանի, որ տարիներ շարունակ նահանջ ապրելով՝ Ռուսաստանը բավական սրընթաց փորձում է վերականգնել իր տնտեսական և քաղաքական դիրքերը, չնայած որ այս գործոնը բավական կարևոր դեր, անկասկած, խաղում է: Միևնույն ժամանակ, նման սրընթաց նախա-գծերի իրագործումն արդյունք է նաև ընդհանուր աշխարհաքաղաքական զարգացումների տրամաբանության, որում ԱՄՆ միանձնյա դիրքի թուլացումը և ապագա աշխարհակարգի ստույգ պատկերացումների բացակայությունը Ռուսաստանին, մյուս գլոբալ և անգամ տարա-ծաշրջանային ակտորներին ստիպում են ավելի արագ զբաղեցնել ազատված, ազատվող կամ ազատվելու հեռանկար ունեցող դիրքերն աշխարհի տարբեր մասերում: Եվ սրա լավագույն միջոցներից մեկը հենց էներգետիկ գործոնի և էներգետիկ նախագծերի իրագործումն է:

Թուրքիա-Հունաստան-Իտալիա գազատար

Ի տարբերություն «Հարավային հոսք»-ի՝ Թուրքիա-Հունաստան-Իտալիա գազատարի կառուցման նախագիծն արդեն մի քանի տարի է, ինչ շրջանառվում է մասնագիտական և եվրոպական կառույցներում: Սակայն հուլիսի 28-ին ստորագրված համաձայնագիրը գազա-տարի կառուցման մասին ոչ միայն այս քննարկումների արդյունք է, այլ նաև արձագանք «Հա-րավային հոսք» նախագծի իրականացմանը՝ ոչ Թուրքիայի կամ Հունաստանի, այլ նախագծի հիմնական հովանավորներ ԵՄ-ի և ԱՄՆ-ի կողմից:

Թուրքիա-Հունաստան-Իտալիա գազատարը տեխնիկական և կառուցվածքային տեսա-կետից ենթադրում է երկու նախագծերի իրականացում՝ Թուրքիա-Հունաստան գազատար (*Turkey-Greece Interconnector*) և Հունաստան-Իտալիա գազատար (*Greece-Italy Interconnec-tor*), որոնցից առաջինի իրագործումը քաղաքական առումով բավական բարդ է: Հունաստա-նը, չնայած վերջին տարիներին երկրում գազի սպառման հարաբերական աճին, ԵՄ տարած-քում համեմատաբար սակավ քանակությամբ բնական գազ սպառող երկիր է: Նշենք, որ այդ երկրի համար ամենաօպտիմալ տնտեսական զարգացման տեմպերի ապահովման պարա-գայում 2015թ. գազի սպառումը Հունաստանում կհասնի ընդհամենը 9 մլրդ մ^3-ի: Նման պարա-գայում Հունաստանի հետաքրքրվածությունը Թուրքիայի հետ համատեղ գազատար կառու-ցելու ծրագրի վերաբերյալ չի կարելի նշանակալի համարել:

Հունաստանն այս գազատարի կառուցման շուրջ բանակցություններին ժամանակին մասնակցեց հիմնականում ԵՄ ճնշման արդյունքում: Այս տեսակետից բավական հատկա-նշական է, որ Թուրքիա-Հունաստան գազատարի կառուցման մասին առաջին բանակցու-թյունները 2000թ. անցան Եվրոպական հանձնաժողովի հովանու ներքո: Հենց այս բանակցու-թյունների արդյունքում էլ վերջնականապես մշակվեց Հարավեվրոպական գազային շղթայի զարգացման նախագիծը, որի հիմնաքարերից մեկը դարձավ Թուրքիայի տարածքում կասպյան, իրանական, կենտրոնաասիական և ռուսական գազի կուտակումը և Հունաստանի տարածքով արտահանումը դեպի Հարավային Եվրոպայի երկրներ: Լավատեսական հիմք նման նախագծի իրականացման համար, իհարկե, կար, ինչը պայմանավորված էր արդեն իսկ երեք գազատարային ծրագրերի հաստատմամբ կամ իրականացմամբ. խոսքը Թավրիզ-Էրզրում, Բաքու-Էրզրում և «Երկնագույն հոսք» խողովակաշարերի մասին է:

Իրան-Հունաստան գազատարի ստեղծման նախագծին զուգահեռ՝ նույն Եվրոպական հանձնաժողովի ակտիվ մասնակցությամբ ծնվեց նմանատիպ այլ նախագիծ, որի հիմնական նպատակն արդեն պետք է լիներ դեպի Կենտրոնական Եվրոպա նոր գազատարների կառու-ցումը և բնական գազի մատակարարումը: Խոսքը «Նաբուքքո» ծրագրի մասին է, որը նույնպես ենթադրում է Թուրքիայի վերածում գազի խոշոր կուտակատեղիի:

Փուլ 1	Թուրքիա-Հունաստան 285 կմ գազատարի կառուցում
Փուլ 2	Կառուցված գազատարի հզորացում՝ Հունաստանի տարածքով Բուլղարիա գազ մատակարարելու նպատակով
Փուլ 3	Հունաստանի արևմտյան ծովափին 329կմ երկարությամբ գազատարի կառուցում, որտեղից 224կմ երկարությամբ մերձափնյա գազատարի կառուցում դեպի Օտրանտո, Իտալիա: Հնարավոր է այս գազատարից մատակարարում նաև Ալբանիային և նախկին Հարավսլավիայի երկրներին, առաջին հերթին՝ Բոսնիա-Հերցեգովինային
Փուլ 4	3-րդ փուլի շրջանակներում կառուցված մակակառույցի հզորացում և Իտալիայից գազի արտահանման կազմակերպում Կենտրոնական Եվրոպա

«Հարավային հոսքի» և Թուրքիա-Հունաստան-Իտալիա գազատարի շուկաներն ու հումքային աղբյուրները

Ակնհայտ է, որ որոշակի նմանություն կա «Հարավային հոսք» և Թուրքիա-Հունաստան-Իտալիա գազատարային նախագծերի միջև: Դրանք են.

1. *Նույն հումքային աղբյուրները գազատարների ծանրաբեռնվածության ապահովման համար*: Երկու նախագծերի իրականացման հիմքում ընկած է պայքարը ռուսական, ղազախական, ադրբեջանական, թուրքմենական, ուզբեկական գազը ԵՄ արտահանելու նկատմամբ վերահսկողության համար:
2. *Նույն շուկայի պահանջարկի ապահովումը*: Երկու նախագծերի իրականացման վերջնական տնտեսական արդյունքը պետք է լինի Հարավային Եվրոպայի գազի ոլորտում առաջատար դիրքի գրավումը:
3. *Եվ, վերջապես, երկու նախագծերի իրականացման մեջ, բացի գլոբալ քաղաքական շահերից, առկա են նաև կոնկրետ տարածաշրջանային շահեր:* Այստեղ հարկ է նշել Ռուսաստանի կողմից իր նախագծի իրականացմանը Սերբիայի ընդգրկումը, իսկ մյուս դեպքում՝ ակտիվ թուրքական մասնակցությամբ ստեղծվող նախագծի շրջանակում մահմեդական Ալբանիայի և մասամբ մահմեդական Բոսնիա-Հերցեգովինայի էներգետիկ անվտանգության ապահովումը:

Երկու նախագծերը բավական իրարամերժ են: Երկուսն էլ նպատակ ունեն հիմնականում նույն գազը հասցնել Եվրոպա և բավարարել միևնույն շուկաների պահանջարկը: Այս հակասությունն այսպես թե այնպես զգալի ազդեցություն է թողնելու ԵՄ էներգետիկ անվտանգության, Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների վրա, և որ ամենակարևորն է՝ այս երկու նախագծերի հակամարտության արդյունքից է մեծ մասամբ կախված Կենտրոնական Ասիայի երկրների որոշումը, թե որ գազատարով և ում հետ դաշնակցելով նրանք պետք է արտահանեն իրենց էներգետիկ ռեսուրսները: Սրանից են հիմնականում կախված Հարավային Կովկասի էներգատարանցման հեռանկարները:

Այս երկու նախագծերի գոյությունը՝ փոխլրացման սկզբունքով, մեր կարծիքով, հնարավոր է միայն մեկ պարագայում. եթե Իրանը համաձայնության հասնի ԵՄ-ի և Թուրքիայի հետ գազի արտահանման պայմանների և սկզբունքների վերաբերյալ, ինչն ամբողջապես կարող է զբաղեցնել Թուրքիա-Հունաստան-Իտալիա գազամուղի հզորությունները՝ առանց դրանց ապահովմանը ներգրավելու Կասպիցի և Կենտրոնական Ասիայի գազային պաշարները: Այսպիսի նշաններ կարծես թե կան. հուլիսի 15-ին թուրքական իշխանությունները հայտարարեցին, որ նախնական պայմանավորվածություն են ձեռք բերել Իրանի հետ տարեկան մոտ 30 մլրդ մ^3 գազ Թուրքիայի տարածքով տարանցելու, ինչպես նաև թուրքական ընկերություններ-

րին իրանական խոշորագույն՝ Հարավային Պարս գազի հանքավայր ներդրումային մուտքի ապահովման մասին:

Նշենք, որ Հարավային Պարսը ներդրումային առումով եզակի հնարավորություններ ունի ոչ այնքան իրանական ղեկավարության տրամադրած արտոնությունների տեսանկյունից, այլ նաև այն պատճառով, որ Հարավային Պարսը դեռևս չմշակված բնական գազ ունեցող խոշորագույնն ավազանն է աշխարհում: Բավական կարևոր կարող է լինել հայկական կողմի մասնակցությունը Հարավային Պարսի գազային նախագծերին, ինչը ոչ միայն կամրապնդի հայ-իրանական միջպետական կապերը, այլ նաև կարևոր հիմք կհանդիսանա ՀՀ էներգետիկ անվտանգության և քաղաքականության արդյունավետության բարձրացման գործում:

Ինչ վերաբերում է Թուրքիա-Իտալիա և «Հարավային հոսք» նախագծերին, ապա դրանց միջև մրցակցությունը նոր բազմակողմանի էներգետիկ մրցակցության միայն մի կողմն է, որն առկա է Ռուսաստանի և Արևմուտքի միջև:

Հարավային Կովկասն այս մրցակցության գոտիներից է, ինչը ոչ միայն մարտահրավերների, այլ նաև նոր հնարավորությունների աղբյուր է:

Սևակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

НОВАЯ ЭРА ЯДЕРНОГО ПРОТИВОСТОЯНИЯ

Ядерное оружие, которое в последние годы являлось «замороженной дубинкой» в руках сверхдержав, вновь становится аргументом в борьбе за геополитический передел на планете. После длительного противостояния относительно размещения американских систем ПРО в Чехии и Польше между Москвой и Вашингтоном развернулась очередная стадия холодной войны.

Попытка России откупиться Габалинской РЛС провалилась. Американцы фактически отказались от обмена – совместное пользование РЛС, размещенной на территории Азербайджана в обмен на отказ от планов по ПРО в Восточной Европе.

Россия в ответ применила асимметричные шаги. При этом отношения между Москвой и Вашингтоном накаляются день ото дня. Впервые за 15 лет президент Путин восстановил дежурство стратегической авиации. Несмотря на то, что на борт пока не берется ядерное вооружение, однако это уже важный симптом.

Патрулирование в отдаленных географических районах осуществляют стратегические ракетоносцы дальней авиации Ту-95 МС и Ту-95 с аэродромов Энгельс, Анадырь, Воркута, Тикси. По словам заместителя командующего дальней авиацией ВВС России генерал-майор Анатолия Жихарева, возобновленные полеты будут проходить без ядерного оружия – на борту будут только учебные ракеты. По заверению российских военных, возобновление патрулирования не направлено против других стран и является обычной практикой боевого дежурства.

17 августа в воздух было поднято 14 самолетов. В целом в патрулировании участвуют 20 машин стратегической авиации, способные нести до 12 ракет с ядерным зарядом. В течение дня совершается порядка 50 вылетов с налетом около 400 часов.

Официально российская сторона объясняет свою инициативу защитой национальных экономических интересов, о чем заявил первый вице-премьер Сергей Иванов, добавив: «Это не связано с блоковым мышлением, с противостоянием и тем более – с возвратом к холодной войне. Ничего агрессивного в этих полетах нет». Владимир Путин в свою очередь поддержал эту версию: «Патрулирование будет осуществляться в регионе активного судоходства и экономической деятельности России... С этого дня боевое дежурство будет осуществляться на регулярной основе. Оно носит стратегический характер»

Реакция американской стороны оказалась показательно спокойной. Представитель Госдепартамента США Шон Маккормак заявил по этому поводу: «Мы уже находимся на иных позициях, нежели это было с Советским Союзом. Если России захотелось достать часть этих старых самолетов из нафталина и снова поднять их в воздух, то это решать им». Заместитель пресс-секретаря Белого дома Гордон Джондро в свою очередь заявил: «Не думаю, что наши военные испытывают по этому поводу обеспокоенность».

Впрочем, британская сторона реагирует на происходящее более нервно. Так, 6 сентября, после того, как российские стратегические вплотную приблизились к воздушному пространству Великобритании, по тревоге были подняты перехватчики *Tornado* королевских ВВС. В свою очередь Норвегия также подняла по тревоге истребители *F-16*. В целом в воздух было поднято 20 военных самолетов. Впрочем, российская сторона заявила о том, что бомбардировщики выполняли полеты в нейтральной территории, и это никоим образом не было направлено против других стран.

Российская дипломатия пошла после этого еще дальше. В конце августа посол России в Беларуси Александр Суриков сделал сенсационное заявление: «В ответ на планы Вашингтона (речь идет о размещении систем ПРО в Восточной Европе. – *С.М.*) Россия и Белоруссия могут принять решение о создании новых совместных военных объектов, в том числе и ядерных. Конечно, все это произойдет при определенном уровне взаимодоверия и интеграции». В россий-

ской прессе незамедлительно появились публикации о том, что официальный Минск отнюдь не против подобного развития ситуации и готов пойти Москве навстречу.

Масла в огонь подлило отсутствие в течение нескольких дней комментариев со стороны МИД России. В самом посольстве заявляли, что слова посла надо воспринимать в контексте заявлений Владимира Путина, что Россия пойдет на асимметричные ответы на планы Вашингтона по развертыванию систем ПРО в Европе. Так, президент России говорил о возможности размещения российских межконтинентальных ракет в европейской части страны, в частности – в Калининградской области.

Кроме того, помощник госсекретаря Союза России и Белоруссии Иван Макушок заявил, что технически Беларусь готова к размещению у себя российских ракет, так как военная инфраструктура советского периода находится в самом лучшем состоянии: «У белорусов в идеальном состоянии находится вся военная инфраструктура времен Варшавского договора вплоть до пусковых установок ракет с ядерными боеголовками, которые были вывезены в Россию после развала СССР». По словам Макушока, «Москва вряд ли упустит такую возможность, ведь для нас Белоруссия – это козырная карта в споре с Америкой. Вернуть ракеты в шахты куда быстрее, чем построить радар в Польше, так что это будет даже не ответ, а упреждение».

Лишь спустя почти неделю глава российского внешнеполитического ведомства Сергей Лавров заявил, что у России нет планов по размещению ядерного оружия на территории Беларуси: «У Белоруссии есть свой статус, закрепленный конституцией (С 1994г. в конституции Беларуси закреплен безъядерный статус республики. – *С.М.*). На этом, я считаю, вопрос исчерпан».

В настоящее время между Вашингтоном и Москвой идет зондаж относительно возможных изменений в ядерном балансе. Однако налицо скатывание к временам холодной войны. В то же время есть и серьезные отличия с этим периодом истории. Постоянное увеличение ядерного клуба за счет стран третьего мира, с одной стороны, резко меняет мировую геополитическую конфигурацию, создавая региональные очаговые ядерные угрозы (в связи с отсутствием у этих стран ракет дальнего радиуса действия).

С другой стороны, в военных концепциях России и США уже наличествуют пункты, дающие военным возможность применять тактическое ядерное оружие. Например, в целях противодействия международному терроризму. Общая тенденция развития ситуации в этом направлении говорит о том, что уже в ближайшие годы одна из сторон может перейти психологический барьер и применить ядерный заряд в локальном конфликте. После этого возврат к нынешнему статус-кво будет крайне труден, если не невозможен в принципе.

Самвел Мартиросян

НЕКОТОРЫЕ ОЦЕНКИ И ВЫВОДЫ ИЗ АНАЛИЗА ВЫЗОВОВ И УГРОЗ В РЕГИОНЕ ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ И КАВКАЗА

Геополитическое противоборство

1. Центральная Азия и Кавказ остаются ареной геополитических столкновений ведущих государств мира (США, Китай, Россия, Индия, Англия и др.) на Евразийском континенте. В геостратегическое противоборство оказались вовлечены «региональные сверхдержавы» – Пакистан, Израиль, Иран, Турция, Саудовская Аравия, а также практически все бывшие республики СССР.

2. В настоящее время Россия в регионах ЦА и Кавказа сталкивается одновременно с тремя глобальными вызовами:

- со стороны США и их союзников по блоку НАТО;
- со стороны Китая;
- со стороны отдельных мусульманских государств и международных организаций исламского толка.

При этом все эти оппонирующие центры силы жестко противоборствуют между собой. Это позволяет России маневрировать и выигрывать время в интересах восстановления своего традиционного влияния в регионах.

В целом в новых международных условиях России так и не удалось в полной мере сыграть роль ведущего субъекта в объединительных процессах. Во многом это спровоцировало обострение борьбы за сферы влияния на постсоветском пространстве.

Борьба за советское наследие приняла характер жесткого противоборства. С одной стороны, геополитические оппоненты России стремятся вовлечь страны СНГ в сферу своего влияния и, потеснив РФ, расширить свое военно-политическое и экономическое присутствие на Кавказе и в Средней Азии. С другой стороны, Россия начинает прилагать все больше усилий, чтобы сохранить традиционное присутствие в регионе.

3. Серьезную опасность для интересов как стран ЦА и Кавказа, так и России представляют попытки Запада создать на южном направлении плацдарм (наряду с уже созданным на Балканах) для контроля над всей территорией, ресурсами и стратегическими коммуникациями Евразии.

В стремлении противодействовать усилению позиции России в регионе геополитические противники активно поощряют различного рода политические акции, кампании и «революции», направленные на дестабилизацию обстановки и изменение конфигурации власти в пользу прозападных сил. Существенно дестабилизируют обстановку попытки вытеснения России из регионов традиционного влияния (Казахстан, Таджикистан, Туркмения и др.). На стороне геополитических оппонентов России наиболее активно действуют Грузия и Азербайджан.

4. Среди основных геополитических конструкций антироссийской направленности необходимо особо выделить объединения, за которыми достаточно четко просматривается роль США и Турции. Это, прежде всего, ГУАМ, в котором, в частности, активно участвуют Грузия и Азербайджан. Продолжает формироваться военно-политическая ось Баку–Анкара–Тель-Авив.

5. Укреплению российских позиций в Закавказье и Средней Азии, созданию дополнительного противовеса турецкому влиянию на Кавказе, в Поволжье и других регионах компактного проживания мусульман в России объективно способствует активизация политики России в рамках ЕврАзЭС и ОДКБ. Одновременно Россия активизирует свое участие в таких региональных объединениях, как организация Центрально-Азиатского сотрудничества и Организация экономического сотрудничества (ОЭС-ЭКО).

Все более авторитетной и влиятельной организацией становится Шанхайская организация сотрудничества (Россия, Китай, Казахстан, Киргизия, Таджикистан, Узбекистан). Центрально-азиатское направление в деятельности ШОС в настоящее время становится едва ли не основным. Благодаря своим уже имеющимся и потенциальным возможностям, ШОС превратилась в важного геополитического игрока. Само существование ШОС, ее решения оказывают большое влияние на мировую политику, на действия США в Центральной Азии.

6. С геополитической точки зрения наиболее взрывоопасной и непредсказуемой для стабильности Центральной Азии и Кавказа остается ситуация в Ираке и Афганистане. Война в Ираке провоцирует распространение энергии хаоса на все близлежащие (соседние) регионы. В Афганистане наблюдается укрепление позиций организаций «Аль-Каиды» и «Талибан», увеличивается число их сторонников. Сегодня под прямым контролем или под сильным влиянием талибов находится уже более половины афганской территории.

7. США и их ближайшие союзники по НАТО постепенно утрачивают контроль в Ираке и Афганистане. Существует вероятность ухода войск НАТО из этих стран. В этом случае может произойти дальнейшая эскалация не только региональных, но и глобальных катастрофических последствий. Экспансия талибов, по мнению специалистов, будет распространяться на сопредельные страны, в частности, в Среднюю Азию, Пакистан и др. страны.

8. Активное вмешательство США и их союзников по НАТО во внутренние дела стран региона (Афганистан, Ирак, Грузия, Иран и др. государства) привело к тому, что в настоящее время здесь сформировалось мощное антиамериканское движение с центром в Афганистане, которое имеет тенденцию к распространению в регионе.

В то же время нет никаких гарантий, что антиамериканизм талибов при определенных условиях не станет антироссийским, особенно если экспансия пойдет к северу от Афганистана. Это может спровоцировать исламскую оппозицию в мусульманских анклавах России, прежде всего в Поволжье, на активные сепаратистские действия под лозунгом создания Всемирного исламского халифата. При этом совпадение намерений Запада, который отводит исламскому фактору особую роль в провоцировании дезинтеграционных процессов, подрыве территориального устройства Российской Федерации, и радикальных исламских организаций представляет особую опасность для России.

На среднеазиатском направлении наиболее опасным регионом является многоэтническая и отсталая в социально-экономическом отношении Ферганская долина, к которой примыкают территории Узбекистана, Таджикистана и Киргизии. Только здесь количество сторонников исламистских организаций типа «Хизб ут-Тахрир» и др. колеблется от 7 до 15 тысяч человек.

9. Особую угрозу для региональной безопасности и в целом для материка Евразия представляет собой существование целостной разветвленной системы наркотраффика в Центральной Азии и на Кавказе. В настоящее время происходит дальнейшее сращивание транснациональной наркомафии с определенной частью элит государств региона, в частности, Азербайджана, Таджикистана, Узбекистана, Киргизии. Ситуация усугубляется тем, что происходит исламизация и политизация наркобизнеса.

10. Серьезную опасность для стабильности региона ЦА и Кавказа таят в себе процессы политизации ислама и исламизации политики. В настоящее время они все больше затрагивают и бывшие советские республики, частности, Таджикистан, Киргизию, Азербайджан, Туркмению.

11. Негативным фактором является усиливающаяся экономическая и финансовая зависимость целого ряда постсоветских республик от Запада, Китая и от некоторых «региональных сверхдержав». Так, в частности, практически в полной экономической зависимости от США находится Грузия. Огромные долги накопила Киргизия (только МВФ республика должна более $2 млрд). В Азербайджане, по некоторым данным, не осталось ни одной отрасли экономики, ни одного региона, куда бы не был вложен турецкий капитал.

Геодемографические опасности

1. Взаимные территориальные притязания, которые провоцируют межгосударственные, межэтнические и другие конфликты, существуют практически между всеми бывшими советскими республиками на Кавказе и в Средней Азии. Наиболее остро они проявляются в отношениях между Азербайджаном и Арменией, Грузией и Абхазией, Грузией и Южной Осетией, Узбекистаном и Таджикистаном, Киргизией и Казахстаном.

Глубокие исторические корни имеют территориальные претензии Таджикистана к Узбекистану. В Душанбе существуют влиятельные силы, которые считают таджикскими города Самарканд, Бухара и др. В советское время в 20-х годах эти города и другие территории исторического Таджикистана были сначала включены в состав существовавшего тогда советского Туркестана, а затем переданы Узбекистану.

Серьезные территориальные притязания к Казахстану имеет Узбекистан. В частности, в качестве спорных территорий рассматриваются гг. Сарыагаш, Туркестан и Сайрам, где преимущественно проживают узбеки. Кроме того, спорными с точки зрения Узбекистана являются территории Кировского, Махтааральского и Жетысайского районов Южноказахстанской области, которые в 1956г. были переданы Узбекистану, а затем частично возвращены Казахстану. Нерешенным в казахстанско-узбекских отношениях является также вопрос о границе, проходящей по акватории Аральского моря.

До сих пор не восстановлены дипломатические отношения между Туркменией и Азербайджаном, которые были разорваны в 2001г. в результате возникшего конфликта по поводу разделения каспийских нефтегазовых месторождений. Неразрешенным, в частности, остается спор двух стран о принадлежности крупного нефтегазового месторождения «Кяпаз-Сердар», расположенного в Каспийском море на границе двух государств. Оно содержит, по некоторым оценкам, 450 млн баррелей нефти и 32 млрд кубометров газа.

2. В геоисторическом контексте нельзя также признать урегулированными территориальные проблемы между Россией и Казахстаном, Россией и Азербайджаном, Россией и Грузией. Так, например, значительное число русских, проживающих в приграничных с Россией районах Казахстана, испытывает тягу к воссоединению с исторической Россией. Это делает уязвимой внутреннюю стабильность в РК в долгосрочном плане. Казахстан, как известно, до советской власти не имел своей государственности, а административная граница между бывшей союзной республикой и РСФСР была проведена без учета фактического расселения русских и казахов.

Еще большую остроту носят сегодня грузино-абхазские и грузино-осетинские конфликты.

3. Серьезную угрозу для регионов ЦА и Кавказа представляет дальнейшее обострение межэтнических и этноконфессиальных противоречий. Среди них особо можно выделить ирано-турецкие, ирано-иракские, арабо-иранские, афгано-пакистанские и др. противоречия, которые усугубляются по линии сунито-шиитских и тюрко-персидских отношений. Особняком стоят нерешенные проблемы курдской, пуштунской и белужской государственности.

Реализация проекта «Великий Курдистан» затрагивает территории не только Сирии, Турции, Ирака и Ирана, но и отдельных государств Кавказа (Армения, Грузия) и России. Решение пуштунской проблемы и появление на географической карте государства Пуштунистан поставит под угрозу целостность Пакистана и Афганистана. Воплощение в жизнь планов образования государства Белуджистан неизбежно затронет территориальные интересы Афганистана и Ирана.

4. В условиях заметного роста общего числа населения в республиках Средней Азии (свыше 50 млн человек в настоящее время) еще одним дестабилизирующим фактором становится неравномерность расселения населения в отдельных государствах Средней Азии, усугубляемая дефицитом плодородных земель и водных ресурсов. При определенных условиях это может стать катализатором социальных, межгосударственных, межэтнических и др. конфликтов. В частности, большая плотность населения в Узбекистане может провоцировать волнения на социальной почве, что в результате, как это уже было в истории, может привести к массовой миграции жителей Узбекистана в Казахстан[1].

Энергетические угрозы

1. Центральная Азия с ее огромными запасами углеводородов является объектом особой международной активности и интереса. По западным оценкам, в недрах Центральной Азии хранятся приблизительно 46% мировых запасов природного газа. Только разведанные запасы Каспийского шельфа оценены в 17–21 миллиардов баррелей нефти и 7 триллионов кубических метров природного газа.

2. Реализация Западом новой энергетической стратегии в регионе направлена на создание и развитие альтернативных трубопроводов в обход России. Стратегия нацелена не только против России, но и Китая, который рассматривается США как главный источник потенциальной геополитической угрозы интересам Запада на материке Евразия и в мире в целом.

Американская администрация активно участвует в нескольких газовых проектах по созданию в Европе новой газопроводной инфраструктуры в качестве альтернативы трубопроводам российского Газпрома. При содействии США уже построен и действует нефтепровод Баку-Тбилиси-Джейхан. В самое ближайшее время заработает газопровод Баку-Тбилиси-Эрзурум, по которому в Турцию пойдет азербайджанский природный газ.

3. Особую настойчивость американцы проявляют в попытках привлечь Казахстан и Туркмению к проекту строительства Транскаспийского газопровода в обход России. При этом предлагается приступить к строительству трубопровода через Каспий уже сейчас, не дожидаясь заключения пятисторонней Конвенции о правовом статусе Каспийского моря[2].

4. Жесткое противоборство ведется вокруг Казахстана, интерес к которому обоснован тем, что 70% месторождений нефти и газа, сосредоточенных в районе и акватории Каспийского моря, находятся на его территории.

До недавнего времени Астана категорически отказывалась вступать в какие-либо энергетические сделки в обход России, что, в частности, обусловлено позицией президента Назарбаева и унаследованной со времен СССР структурой трубопроводов. В последнее время под давлением

---

[1] В настоящее время численность населения Республики Узбекистан составляет порядка 25,2 млн человек. При этом плотность населения превышает 470 человек на 1 кв. км. Ежегодно численность населения Узбекистана увеличивается на 500 тыс. человек. В Казахстане проживает 15 млн 400 тыс. человек, плотность населения – 6 человек на 1 кв. км.

[2] США при этом ссылаются на то, что Азербайджан, Россия и Казахстан уже согласовали разработку ресурсов шельфа Каспия в своих секторах и ведут подводную разработку каспийских ресурсов.

США и других ведущих стран мира некоторые бывшие советские республики – прежде всего, Азербайджан и в определенной степени даже Казахстан – начинают все чаще игнорировать военно-политические, энергетические и другие интересы России в регионе Центральной Азии.

Вместе с тем, несмотря на разностороннее давление США и Запада на президента РК, Казахстан фактически отказался от участия в ряде трубопроводных проектов в обход России, в частности, в проекте строительства Транскаспийского газопровода, усомнившись в его целесообразности и возможности доставлять газ из Средней Азии в Европу «без участия России», и фактически отказался от обсуждения этой идеи.

5. После смены политического руководства в Ашхабаде резко обострилась борьба за влияние на Туркмению, что вызвано прежде всего тем, что в ее недрах находятся богатейшие запасы природного газа. Особую активность в борьбе за туркменский газ проявляют США и их союзники по НАТО. Одновременно Китай пытается возобновить переговоры по строительству трубопровода из Туркмении к своим восточным границам.

Россия также предпринимает разносторонние политические и дипломатические усилия в отношении Туркмении, опасаясь, что долговременное (до 2028г.) соглашение по поставкам газа по трубопроводу Средняя Азия–Центр может быть расторгнуто. В ходе визита президента Туркменистана в Москву в апреле с.г. были подтверждены ранее заключенные между Россией и Туркменией соглашения и даже достигнуты договоренности об увеличении поставок туркменского газа в Россию.

6. Наряду с газом и нефтью объектом особого экономического противоборства в ЦА является уран. Наибольшими запасами этого стратегического сырья в регионе обладает Казахстан. Немалыми запасами урана располагают также Узбекистан и Таджикистан. Контроль над урановым рынком Узбекистана продолжают сохранять американцы.

Россия и Казахстан вместе владеют приблизительно третью мировых разведанных запасов урана (Казахстан – 622 тыс. тонн, Россия, по разным оценкам, от 615 до 830 тыс. тонн). В связи с тем, что Россия уже к 2020г. может столкнуться с полным истощением разведанных запасов урана, сегодня она активно сотрудничает с Казахстаном в урановой сфере.

Природно-климатические опасности

1. Согласно прогнозам, в результате прогнозируемых природно-климатических катаклизмов могут произойти определенные изменения в географической конфигурации территории стран ЦА и Кавказа. Так, в регионе Средней Азии ожидается сокращение акватории водоемов, частичное или полное высыхание русел ряда крупных рек, увеличение площадей пустынь, эрозия плодородных почв.

В то же время прогнозируется продолжение подъема воды в Каспийском (Хазарском) море. При этом ожидается, что акватории Черного, Каспийского и Азовского морей будут постепенно соединяться, что будет приводить к полному или частичному затоплению территорий Кавказа.

2. Прогнозируется, что в результате природно-климатических изменений в Средней Азии еще больше обострится проблема нехватки воды, используемого населением для питья и орошения полей. В результате будет происходить сокращение зон традиционного земледелия, и, как следствие, возникнет дефицит продовольствия. Эти и другие негативные последствия могут вызвать массовую миграцию населения – прежде всего на север, в сторону России, а также на восток, в направлении Тибета, Ирана, Индии.

3. Существуют прогнозы, что уже в этом году в результате природных аномалий и высокой вероятности маловодья обострится проблема распределения водных ресурсов в регионе. В

связи с этим высока вероятность засухи. Ситуацию осложняет отсутствие реальных механизмов по распределению и экономии воды. Идущие в настоящее время переговоры между Казахстаном, Киргизией, Таджикистаном и Узбекистаном о разделе и регулировании водных ресурсов по-прежнему осложняются их различными позициями в водопользовании между странами. Киргизия и Таджикистан, расположенные в верхних течениях рек, накапливают воду весной и летом, а зимой спускают ее, вырабатывая электроэнергию. Это создает серьезные проблемы Казахстану и Узбекистану.

Напряженность в межгосударственных отношениях в регионе усиливают планы Таджикистана и Киргизии по строительству каскада новых ГЭС на общих реках. По мнению специалистов, если Таджикистан и Киргизия реализуют хотя бы половину своих «гигантских» планов, то на плодородии Ферганы можно будет «поставить крест». В результате произойдет превращение обрабатываемых полей в пустыни, что неизбежно вызовет массовую миграцию людей из Узбекистана в сопредельные страны, в том числе в Россию.

Общие выводы

Обострение геополитического и межцивилизационного противоборства в ЦА и на Кавказе ставит сегодня перед Россией задачу выработки и проведения эффективной внешней региональной политики. При этом важнейшее значение приобретает поиск наиболее оптимальной модели взаимодействия и объединения стран региона и, прежде всего, бывших советских республик вокруг России, превращение России в притягательный субъект интеграции на постсоветском пространстве и в целом в регионе.

д.т.н. Сергей Гриняев
специально для фонда «Нораванк»

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Թուրքիայում 2007թ. օգոստոսի 28-ին իշխող իսլամամետ Արդարություն և զարգացում կուսակցությունից (ԱԶԿ) առաջադրված Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլահ Գյուլի ընտրվելը նախագահի պաշտոնում կարելի է համարել Թուրքիայի Հանրապետության ամենաբարդ քաղաքական գործընթացներից մեկը: Թուրքիան դառնում է մահմեդական բնակչությամբ առաջին աշխարհիկ հանրապետությունը, որի նախագահը հրապարակային առումով մահմեդական է, հետևում է իսլամական ծիսակարգին, մեծ տեղ է տալիս իսլամական հռետորականությանը: Ա.Գյուլը Քեմալ Աթաթյուրքից հետո երկրորդ նախագահն է, ում կինը, հետևելով իսլամական ավանդույթին, գլխաշոր է կրում: Հակակրոնական աշխարհիկ շրջանակներն այս հանգամանքը դիտարկում են որպես սպառնալիք թուրքական լաիցիզմի սկզբունքներին: Մինչդեռ Աբդուլահ Գյուլը, որին երկրի զինվորական ընտրանին մեղադրում է երկրի բնույթը փոխելու ցանկության մեջ, հավաստիացնում է, որ հավատարիմ է մնալու հանրապետության հիմնական սկզբունքներին, այդ թվում՝ աշխարհիկությանը, ժողովրդավարությանը, ԵՄ՝ Թուրքիայի անդամակցությանն ուղղված քաղաքականությանը: ԱԶԿ-ի իշխանության գալը և, վերջապես, այն հանգամանքը, որ թե՛ Էրդողանի և թե՛ Գյուլի կանայք գլխաշոր են կրում, ըստ էության, չի սպառնում աշխարհիկ պետության սկզբունքներին, քանի որ կրոնը և քաղաքականությունը շարունակելու են անջատ գործել:

Հատկանշական է, որ ԱԶԿ-ի իշանության գալը արաբական իսլամական աշխարհում դիտարկվում է որպես հետաքրքիր փորձառություն և նոր մոդելի ձևավորման գործընթաց: Տարիներ շարունակ իսլամական աշխարհը բևեռացված էր աշխարհիկության և իսլամիզմի արժեհամակարգերի միջև: Արդեն անկախության ձեռքբերումից հետո իսլամական երկրների որոշակիորեն արևմտականացված աշխարհիկ վարչակարգերն ամեն կերպ հակազդում էին ժողովրդավարությանը՝ պատճառաբանելով, թե այն հարված կհասցնի աշխարհիկության սկզբունքին: Մինչդեռ իսլամիստները համառորեն պայքարում էին հօգուտ պետական համակարգի թեոկրատացման: Չնայած հազիվ թե հնարավոր է համաձայնել այն տեսակետին, որ ԱԶԿ-ն հստակ ժողովրդավարական ուղղվածություն ունի: Ըստ Բոստոնի համալսարանի միջազգային հարաբերությունների կենտրոնի տնօրեն Հուսեյն Հականիի, եթե կառավարություններն իսլամական աշխարհում բաց լինեն ժողովրդավարության առաջ, ապա կծնվի քաղաքական մի նոր շարժում, ինչպիսին ԱԶԿ-ն է, որը միավորում է հանդուրժողականությունն իսլամական ավանդույթի հետ: Այսպիսով, իսլամական աշխարհում հակոտնյա գաղափարախոսությունների պայքարի համատեքստում այսօր Թուրքիան դառնում է մի երկիր, որտեղ միախառնվում են իսլամը, աշխարհիկությունը և կապիտալիզմը: Թուրքիան դառնում է չափավոր իսլամի արժեհամակարգի կրող և այն գործնականում իրականացնող մի երկիր:

Արաբական մամուլը զգալիորեն անդրադարձավ Թուրքիայում նախագահական ընտրությունների խնդրին: Այս տեսանկյունից հետաքրքիր է արաբական պետությունների արձագանքը: Վերջիններիս տեսանկյունից ԱԶԿ-ի իշխանության գալը որոշակի վտանգ է պարունակում, ինչին արաբական կառավարությունները մեծ իմաստով չարձագանքեցին: Արաբական շատ երկրներում պետության կողմից վերահսկվող մամուլը կամ զանգվածային լրատվամիջոցները շատ դեպքերում անտեսեցին Թուրքիայում նախագահական ընտրությունների արդյունքները՝ այդ մասին տրամադրելով սոսկ տեղեկատվություն: Ընտրություններին հաջորդած օրերին արաբական շատ թերթեր սկսեցին համեմատություններ անցկացնել Թուրքիայի և արաբական երկրների միջև, մատնանշել Թուրքիայի առաջ ծառացած քրդական, հայկական խնդիրները, Կիպրոսի հարցը: Մինչդեռ վարչակարգերին ընդդիմադիր ուժերը, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ակտիվիստները ողջունեցին Թուրքիայում իսլամամետ կուսակցության հաղթանակը:

Անկախ մամուլը դրականորեն արձագանքեց ընտրություններին, քանի որ դրանք անցել են դեմոկրատական ճանապարհով, ինչը կարող է նախադեպ դառնալ նաև արաբական երկրների համար: Նրանք մատնանշում են ԱԶԿ-ի առանձին քայլեր, մասնավորապես՝ ի հակակշիռ զինվորական ընտրանու վարչապետ Էրդողանի՝ քրդական հարցը ոչ ուժային ճանապարհով լուծելու տեսակետը:

Արաբական մամուլում Թուրքիայի նախագահի պաշտոնում Աբդուլահ Գյուլի ընտրությունը վերաճեց իսլամիզմի մասին դիսկուրսի, ինչն այսօր կարևորագույն և առաջնահերթ տեղ ունի արաբական քաղաքական օրակարգում և անմիջականորեն կապված է արաբական աշխարհում բարեփոխումների խնդրի հետ: Իսլամական չափավորների (պոստ-իսլամիստների) կամ նրանց համախոհների կարծիքով՝ թուրքական ընտրությունները ցույց են տալիս, որ իսլամական արմատներ ունեցող կուսակցությունը կարող է որդեգրել ժողովրդավարության սկզբունքը, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է, որ ժողովրդավարությունը և իսլամը համատեղելի են: Իսամ Ալ-Արիանը՝ եգիպտական «Մուսուլման եղբայրներից», Գյուլի ընտրությունը բնութագրեց որպես լիովին հաջողված փորձ, որը խրախուսում է չափավոր իսլամը: «Համաս» շարժումից Մահմուդ Ալ-Զահարը Գյուլի հաղթանակը դիտարկեց որպես իսլամական աշխարհում իսլամականությանը միտված և աշխարհիկությանը հակազդելու ձգտում: Ի դեպ, Գյուլի ընտրությանը «Համասն» առաջին արձագանքողներից մեկն էր: Շարժման մամլո խոսնակ Սամի Աբու Զուհրիի ուղերձում, մասնավորապես, նշված է, որ պատմական փոփոխություններն օգնում են թուրք ժողովրդին և տարածաշրջանի ժողովուրդներին, այդ թվում՝ պաղեստինցիներին: Ըստ այդմ՝ Գյուլի հաղթանակը վկայում է, որ տարածաշրջանը շրջադարձ է կատարում դեպի իսլամը:

Արաբական մամուլում համեմատություններ անցկացվեցին նաև արաբական երկրներում և Թուրքիայում ընտրությունների վերաբերյալ, որպես հակակշիռ օրինակ դիտարկվեցին Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի ոչ արդար ընտրությունները:

Արաբական մամուլում հայտնվեցին նաև հոդվածներ, որոնցում արաբական աշխարհում ժողովրդականություն վայելող իսլամական արդի շարժումներին («Համասին» կամ «Մուսուլման եղբայրներին») ընդդիմախոս հեղինակները համեմատություններ էին անցկացնում չափավոր իսլամի արաբական և թուրքական փորձի միջև՝ անհամեմատ մեծ առավելություններ վերագրելով ԱԶԿ-ին:

Լոնդոնյան համարաբական ուղղվածություն ունեցող «Ալ-Հայաթ» թերթում Աբդուլահ Ալ-Իսկանդերը վիճարկում է, որ արաբական իսլամիստական կուսակցությունները չեն կարող համեմատվել ԱԶԿ-ի հետ, քանի որ, ի տարբերություն ԱԶԿ-ի, նրանք կառչած են մնում ժամանակավրեպ գաղափարախոսություններից և գործում են պատմական իրողությունների համատեքստում: Հեղինակը սկեպտիկ է այն հարցում, որ արաբական կուսակցությունները կարող են նման ռազմավարություն ունենալ:

Հորդանանցի թղթակից Սալեհ Ալ-Քուլլաբը ենթադրում է, որ ԱԶԿ-ն առաջ է քաշում չափավոր, առաջադեմ և ռացիոնալ իսլամիզմի գաղափարներ, մինչդեռ արաբական իսլամիզմը ներկայացնում են Բեն Լադենն ու Զավահիրին:

«Ալ-Հայաթ» թերթում Մուստաֆա Զեյնը «Աշխարհիկությունը հագնում է գլխաշոր» խորագրով հոդվածում գրում է, որ Թուրքիան նոր փուլ է մտնում, որտեղ աշխարհիկությունը ձեռք ձեռքի տված քայլում է իսլամական գլխաշորի հետ: Ըստ հեղինակի՝ այս հանգամանքը նկատի է առնում, որ Թուրքիան պետք է կենտրոնական դեր խաղա Միջին Արևելքում, այն դերը, որն արտահայտվեց Թուրքիայի՝ ԱՄՆ-ին Իրաքի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու համար իր տարածքը տրամադրելու մերժմամբ: Զեյնի կարծիքով՝ իսլամամետներին միավորել է նաև ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության մերժումը, ինչը հիմնավորվում է մշակութային և քաղաքակրթական տարբերություններով: Այս հանգամանքը, փաստորեն, նպաստում է, որպեսզի Թուրքիան հետ գնա դեպի իր արմատները: Ըստ «Ալ-Հայաթ» թերթի մեկ այլ թղթակցի՝ Զուհեյր Կսեյբաթի, Թուրքիայում, ըստ էության, տեղի է ունենում ազգայնականության և իսլամի հաշտեցում:

Հատկանշական է, որ արաբական իսլամական աշխարհում Աբդուլահ Գյուլը շատ դեպքերում բնորոշվում է որպես գործուն քաղաքական գործիչ, իսկ Թուրքիային, ոչ հստակ

հիմնավորմամբ, մեծ դեր է վերապահվում հատկապես Միջին Արևելքի գործերում: Այս տեսանկյունից ուշագրավ է Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Ամր Մուսայի շնորհավորական ուղերձը: Դրանում մասնավորապես նշված է. «Թուրքիան կարող է ջանքեր գործադրել՝ աջակցելու հիմնել անկախ պաղեստինյան պետություն և լուծել Իրաքի ճգնաժամը»:

Փաստ է, որ 2002-ին ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության միջինարևելյան կամ իսլամական ուղղության մեջ որոշակի տեղաշարժեր են նկատվել: Թուրքիան ավելի հաճախ է խոսում իսլամական ումմայի և ընդհանուր խնդիրների մասին, ակտիվորեն գործում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության մեջ և դրա կից կառույցներում: Կազմակերպության գլխավոր քարտուղարը Թուրքիայի ներկայացուցիչ և իսլամական աշխարհում բավական մեծ համարում ունեցող Էքմելլուդին Իհսանօղլուն է: Բացի Իսլամական կոնֆերանսից, Թուրքիան զգալիորեն ակտիվացրել է նախկինում առանձին դեպքերում որոշակիորեն լարված հարաբերություններն արաբական աշխարհի հետ՝ վերջին շրջանում մասնակցելով Արաբական պետությունների լիգայի գագաթաժողովներին:

Եզրակացություններ

Այսպիսով, Թուրքիան ընտրում է մի ճանապարհ, որը հեռու է թե՛ արմատական իսլամիզմից, թե՛ արմատական աշխարհիկությունից: ԱԶԿ-ն իրեն բնութագրում է ավելի շատ որպես չափավոր պահպանողական, քան իսլամիստական կուսակցություն, այն առաջ չի քաշում երկրում իսլամական օրենքների ներդրման գաղափարը (չնայած թե՛ Էրդողանը և թե՛ Գյուլը 1980-ականներին մասնակից են եղել Էրբաքանի իսլամիստական շարժմանը):

Հատկանշական է, որ չնայած իսլամամետությանը, ԱԶԿ-ի գործիչները, այդ թվում Գյուլը, համարվում են լիբերալ, արևմտամետ ուժեր: ԱԶԿ-ի առաջնորդ Էրդողանի օրոք Թուրքիան ձեռնամուխ եղավ ԵՄ-ին անդամակցության գործընթացին, շարունակեց սերտ հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, որոշակիորեն ազատականացավ տնտեսությունը, մեծացավ օտարերկրյա ներդրումների չափը: Չի բացառվում, որ նախագահական ընտրություններում ԱԶԿ-ի հաղթանակը պայմանավորված է տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքական ձգտումների, ինչպես նաև իսլամական աշխարհում չափավոր իսլամիզմի արժեհամակարգի ներդրման ամերիկյան առանձին շրջանակների ցանկությամբ: ԱՄՆ պետդեպարտամենտի հայտարարության մեջ նշված է. «Մենք ողջունում ենք թուրքական ժողովրդավարության այս փորձը: Այն շարունակում է այդ երկրում դեմոկրատական զարգացման կուրսը»: Իսկ Ի.Մանուել Բարոսոն՝ Եվրոպական հանձնախմբի նախագահը, հույս է հայտնել, որ Գյուլի հաղթանակը կարող է լինել նոր խթան Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացում՝ ավելացնելով, որ այն զգալի ձեռքբերում է Թուրքիայի և թուրք ժողովրդի համար:

Թե որքանով Թուրքիան ընդառաջ կգնա իսլամիզմի գաղափարներին, ցույց կտա ժամանակը, եթե ավելացնենք, որ կան տեսակետներ, թե ԱԶԿ-ի հետագա առաջընթացի դեպքում երկրում որոշակիորեն կարող են ներդրվել շարիաթական օրենքներ: Իսկ ապագայի հետ կապված դիտարկումների տեսանկյունից հետաքրքրական է թուրք գիտնական Սենգիզ Սանդարի տեսակետը. «Դուք չպետք է ակնկալեք արմատական փոփոխություններ Գյուլից՝ որպես նախագահ: Նրա ընդդիմախոսները, ովքեր խուճապի մեջ են, թե նա կանի դա, անակնկալի կգան, իսկ նրա աջակիցները, արմատական տեղաշարժերի հույսեր ունենալով, կհիասթափվեն»:

Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ

ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆԸ ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Թուրքական պատմական ընկերության» նախագահ, «պալատական» պատմաբան Յուսուֆ Հալաչօղլուի՝ սույն թվականի օգոստոսի 18-ին Կեսարիա քաղաքում կայացած սիմպոզիումի ժամանակ հավատափոխ հայերի մասին արտահայտած մտքերն անմիջապես լայն արձագանք գտան թուրքական մամուլում և քաղաքական, գիտական, մտավորական շրջանակներում: Հիշյալ սիմպոզիումում Հալաչօղլուն հայտարարել էր, որ Թուրքիայի քրդերի մեծ մասն իրականում ունի թուրքմենական ծագում, իսկ ալևի քրդերը դավանափոխ հայեր են, որոնք առերես իսլամ են ընդունել և փոխել իրենց անունները՝ 1915թ. «տեղահանությունից» ազատվելու համար. «Այսօր բազմաթիվ մարդիկ, որոնք հայտնի են որպես քուրդ ալևի, ցավոք սրտի, հավատափոխ հայեր են: Մեր երկիրը մասնատել ձգտող *PKK* և *TIKKO*[1] ահաբեկչական կազմակերպության անդամներից շատերը հենց այս հայերն են: Այսինքն, ինչպես և մենք կարծում էինք, *PKK-ն* և *TIKKO-ն* իրականում քրդական շարժումներ չեն»:

Այս խոսքերն անմիջապես ունեցան ինչպես դրական, այնպես էլ բացասական արձագանքներ: Այսպես, Հալաչօղլուի դեմ հանդես եկան բազմաթիվ ալևիական կազմակերպություններ, մտավորականներ, պատմաբաններ՝ նրան որակելով ռասիստ, ոչ օբյեկտիվ և անհիմն խոսող «գիտնական»: Օրինակ՝ «Հյուրիյեթ» թերթի լրագրող Մեհմեթ Յըլմազը հարց էր տալիս, թե ինչու պետք է այդ հայերը փոխեին իրենց անունները և ներկայանային որպես մուսուլմաններ: Իսկ հայտնի գրող և լրագրող Մուրաթ Բելգեն արտահայտեց այն միտքը, թե իսլամ ընդունելու միջոցով փրկված այդ 100 հազար հայերի նման քայլը պատկերացում է տալիս, թե ինչ է եղել նրանց հետ, ովքեր չեն դիմել այդ քայլին: Հալաչօղլուի դեմ հանդես եկան դատական հայցով, շատերը սկսեցին պահանջել նաև նրա հրաժարականը: Այս ամենը «ստիպեց» Հալաչօղլուին մամլո ասուլիս հրավիրել և մեկնաբանություններ տալ: Մասնավորապես, նա նշեց, թե չի պնդել, որ բոլոր քրդերն ունեն թուրքմենական ծագում, կամ բոլոր ալևիներն են հայ, սակայն ինքն ունի փաստեր, որոնք ապացուցում են, որ 1915թ. «տեղահանության» ժամանակ շատ հայեր առերես ընդունել են իսլամ՝ աքսորից փրկվելու համար, և նման մարդիկ մեծ թիվ են կազմում հատկապես քուրդ ալևիների շրջանում: Հալաչօղլուն ավելացրեց, որ ունի հավատափոխ բոլոր հայերի ցուցակը և տիրապետում է նրանց մասին մանրամասն տվյալների: «Իմ ձեռքին կան 100 հազար հավատափոխ հայերի մասին մանրամասներ. նրանց նախկին հայկական անունը, թուրքական անունը, բնակության վայրը և այլն»,- հայտարարեց նա՝ միևնույն ժամանակ ասելով, որ դա չպետք է ընկալվի որպես սպառնալիք: Բացի այդ, ըստ Հալաչօղլուի՝ ինքը և իր ղեկավարած Թուրքական պատմական ընկերությունը «Հայոց ցեղասպանության պնդումների դեմ մի ամրոց է», և ներկայումս նա իր աշխատանքներում փորձում է տալ հայկական կողմի այն հարցի պատասխանը, թե ուր են մինչև 1915թ. այդ տարածքներում ապրող 1 500 000 հայերը: «Իրականում ո՞ւր են այդ հայերը, ես որպես գիտնական արդյոք պարտավոր չե՞մ սա ուսումնասիրել»,- նկատել է պատմակեղծարարը: Հալաչօղլուն գտնում է, որ հավատափոխ հայերի մասին իր այս «գիտական աշխատանքը» հենց այդ հարցի պատասխանն է, և մատնացույց անելով մահից փրկվելու համար ստիպված իսլամ ընդունած հայերին՝ ասում է. «Ահա այդ «անհետացած» հայերը, նրանք չեն կոտորվել, և նշանակում է, որ հայկական կողմը մինչև այսօր սուտ է խոսել: Իմ ասածներն ուղղակի ոչնչացնում են հայկական սփյուռքի պնդումները»:

---

[1] PKK - Քրդական բանվորական կուսակցություն, TIKKO - Թուրքիայի բանվորների և գյուղացիների ազատագրության բանակ, որը ձախ ծայրահեղական կազմակերպություն է:

Նշենք նաև, որ բազմաթիվ կառույցներ, քաղաքական գործիչներ, կազմակերպություններ հանդես եկան ի պաշտպանություն «հալածյալ» Հալաչօղլուի և ընդդեմ նրա նկատմամբ «լինչի դատաստանի»։ Մամուլում նույնիսկ սկսեց շրջանառվել այն միտքը, թե միգուցե այս «լինչի» ակցիան ուղղորդված է հենց ծպտյալ կամ հավատափոխ հայերի կողմից։ Հալաչօղլուն չբացառեց նաև այդ վարկածը։

Այդ օրերին Թուրքիայում շատերն անդրադարձան հայերի կրոնափոխության հարցին՝ պաշտպանելով Հալաչօղլուի տեսակետը։ Օրինակ, թուրք պատմաբան Աբդուռահման Քություքը, հաստատելով, որ իրականում նման բան տեղի է ունեցել, ավելացրել է. «Կիլիկիայում հայերի հավատափոխության դեպքեր գրանցվել են 1909 և 1915 թվականներին»։ Միայն նշված տարեթվերն արդեն փաստում են, որ այդ կրոնափոխություններն անմիջականորեն կապված են 1909թ. կիլիկեհայության կոտորածների և 1915թ. Հայոց ցեղասպանության հետ։ Եվ ի վերջո հայտնի փաստ է, որ ցեղասպանությունից ազատվելու համար որոշ հայեր իրոք դիմել են արտաքուստ կրոնափոխության քայլին, բայց Հալաչօղլուի պնդումները, թե այդպիսով բոլոր հայերն ազատվել են կոտորածից և ցեղասպանություն չի եղել, դուրս է ոչ միայն գիտականության, այլև տրամաբանության սահմաններից, ուստի ուղղակի անիմաստ է նույնիսկ մեկնաբանել նման պնդումները։

Գալով քուրդ ալևիների, զազաների շրջանում հավատափոխ հայերի առկայության խնդրին՝ նշենք, որ դա հաստատող փաստեր կան, և 1915թ. Հայոց ցեղասպանության տարիներին իրոք բազմաթիվ հայեր ապաստան են գտել Դերսիմի ալևիների մոտ։ Թուրքական աղբյուրները նույնիսկ նշում են, որ այդտեղ ապաստանած հայերի թիվը մոտավորապես եղել է 50 հազար։ Հատկապես Դերսիմի ընտրությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ պատերազմի մեջ գտնվող օսմանյան բանակը շատ մեծ վերահսկողություն չի ունեցել այդ տարածքների վրա, ինչն էլ հնարավորություն է տվել տեղացիներին պատսպարել հայերին։ Թուրքիայի դերսիմցի ալևիների հետ մեր անձնական շփումների արդյունքում տեղեկացել ենք, որ, օրինակ, մինչև այսօր էլ նրանց շրջանում տարածված է մի դարձվածանման միտք՝ «Մեր տան հայը», որը կարելի է ընդունել հայերին իրենց տներում ապաստան տալու ուղղակի վկայություն և հիշողություն։ Ինչպես վկայում են տարբեր փաստեր, թուրքական պետությունը միշտ իր ուշադրության կենտրոնում է պահել հավատափոխ կամ ծպտյալ հայերի խնդիրը և պարբերաբար մանրամասն ուսումնասիրություններ իրականացրել։ Հայտնի է, որ դեռևս Թալեաթը հատուկ ուշադրություն է դարձրել Հայոց ցեղասպանության տարիներին հայերի կրոնափոխության հարցին՝ փորձելով կանոնակարգել այն։ Նույն Հալաչօղլուն մեջբերում է պետության կողմից 1936-37թթ. կատարած ուսումնասիրության արդյունքները, որտեղ մանրամասն ներկայացված են հավատափոխ հայերի բնակության վայրերը, գյուղերը, թաղամասերը, այդ մարդկանց նախկին հայկական և հետո արդեն թուրքական անունները։ Պետության կողմից մանրամասն փաստեր հավաքելը, հատկապես Դերսիմ նահանգում ապրող հավատափոխ հայերի մասին, մեր կարծիքով՝ ունեցել է կոնկրետ նպատակ։ Հայտնի է, որ 1938թ. թուրքական պետությունը կազմակերպել է կոտորած Դերսիմում, և պատմելով այդ կոտորածի մասին՝ մեր զրուցակից դերսիմցի շատ ալևիներ մեջբերում էին իրենց ավագներից ու կոտորածի ժամանակակիցներից լսածները, որոնց համաձայն՝ այդ ժամանակ թուրքական բանակի թիվ մեկ թիրախը 1915-ին այնտեղ ապաստան գտած հայերն էին։ Ինչպես նշեց մի տարեց զրուցակից, «1915-ին կիսատ թողածը շարունակեցին 1938-ին, և այդ կոտորածի ժամանակ սպանվեցին բավական մեծ թվով հավատափոխ հայեր»։ Ի մի բերելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ, փաստորեն, թուրքական պետությունը 1936-37թթ. հավատափոխ հայերի մասին մանրամասն տվյալներ հավաքելով՝ 1938-ին իրականացրել է նրանց մի մասի կոտորածը Դերսիմում։

Հալաչօղլուն ներկայացրել է նաև 1915-1920թթ. Թունջելի (Դերսիմ) նահանգի որոշ շրջաններում ապրող բացահայտ և հավատափոխ հայերի մի ցուցակ՝ ասելով, թե սա իր ունեցած տվյալների ընդամենը փոքր մասն է։

Շրջան	*Հայ բնակչություն*	*Հավատափոխ հայեր*
Չեմիշգեզեք	35	137
Նազըմիյե	2	23
Փուլումուր	1	1
Օվաջըք	16	--
Մազգիրթ	68	44
Հոզաթ	353	17
Փերթեք	32	102
Ընդամենը	507	324

Ի վերջո, ինչի՞ հետ էր կապված այս ամբողջ աղմուկը, որը բարձրացավ Թուրքիայում Հալաչօղլուի հայտարարությունից հետո, և արդյո՞ք սա ուղղորդված էր իշխանության կողմից, թե՞ ոչ: Ըստ Հալաչօղլուի՝ իր այս հետազոտությունը որևէ կապ չունի իշխանությունների հետ և ունի զուտ գիտական ուղղվածություն: Բայց նաև ավելացնում է, որ անհրաժեշտության դեպքում պատրաստ է այս ամենը տրամադրել պետական օղակներին[1]: Լինելով «պալատական» պատմաբան՝ Հալաչօղլուն հայտնի է իր սկանդալային և ոչ գիտական հայտարարություններով, որոնք, որպես կանոն, միշտ գտնում են լայն արձագանք, ինչն էլ, իր հերթին, մեծապես կապված է նրա զբաղեցրած պաշտոնի[2] հետ, ինչպես նաև հաճախ առաջ է գալիս արհեստականորեն և ուղղորդված: Կոնկրետ վերջին հայտարարությունը չի կարելի համարել սենսացիոն, որովհետև, ըստ էության, Հալաչօղլուն որևէ նոր բան չի ասել: Թուրքիայում իսլամացած հայերի գոյությունը վաղուց հայտնի փաստ է, իսկ հայտարարության մյուս մասը, թե սա սպառիչ պատասխան է հայկական կողմին, լուրջ չեն ընդունում անգամ իրենք՝ թուրքերը, և, ինչպես իրավացիորեն նկատել էր մի թուրք լրագրող, «Ինչ մեղք է Թուրքիան, եթե Հայկական հարցում իրոք առաջնորդվում է Հալաչօղլուի խորհուրդներով»: Նոր չէին նաև Հալաչօղլուի հայտարարությունները տարբեր ծայրահեղական կառույցներում ծագումով հայերի առկայության մասին: Տարիներ շարունակ թուրքական մամուլը, բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ և քաղաքական գործիչներ խոսում են այդ մասին, տարբեր մարդկանց վերագրում հայկական ծագում (այդ թվում՝ Աբդուլահ Օջալանին), նշում, որ սպանված շատ քուրդ ահաբեկիչներ թլպատված չեն և այլն: Հալաչօղլուի հայտարարությունից արհեստական մեծ արձագանք ստեղծելու մեջ, բնականաբար, մեծ էր մամուլի դերը, և թուրքական գրեթե բոլոր թերթերն իրենց առաջին էջերում, հեռուստաընկերությունները լրատվական թողարկումներում անդրադառնում էին այս խնդրին: Մինչդեռ Հալաչօղլուից ավելի վաղ նույն թեմայով բազմիցս արտահայտվել էր և ավելի կոշտ հայտարարություններ արել թուրք մեկ այլ պատմաբան՝ պրոֆեսոր Սալիմ Ջոհջեն, որն ավելի խորությամբ է զբաղվում ծպտյալ և իսլամացած հայերի խնդրով, սակայն նրա մտքերը և հայտարարությունները մամուլում շատ մեծ արձագանք չգտան:

Կարևոր է նկատել, որ Հալաչօղլուի հայտարարությունը և բարձրացած աղմուկը համընկան Թուրքիայում նախագահական ընտրությունների առաջին և երկրորդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածին: Այդ օրերին հասարակության ուշադրությունը սևեռված էր հիմա արդեն Թուրքիայի նախագահ, իսկ այն ժամանակ նախագահի թեկնածու Աբդուլահ Գյուլի կրոնամետ դիմանկարի կամ ավելի կոնկրետ՝ նրա կնոջ գլխաշորի խնդրի վրա: Քաղաքական

[1] Այստեղ ավելորդ չէ նշել, որ ներկայումս էլ թուրքական պետությունը կամ որոշ «անկախ» վերլուծական կենտրոններ և մասնագետներ ինտենսիվորեն աշխատում են հավատափոխ և ծպտյալ հայերի խնդրի շուրջ: Սրա ապացույցներից են, օրինակ, նրանց հրապարակած թվերն իսլամացած հայերի թվաքանակի մասին, որոնք շարունակ թարմացվում են:

[2] Նշենք, որ Թուրքական պատմական ընկերությունը պետական կառույց է, որի ղեկավարին նշանակում է անձամբ վարչապետը մեկ տարի ժամանակով և հաջորդ տարի նպատակահարմարության դեպքում երկարաձգում է պայմանագիրը: Յուսուֆ Հալաչօղլուն այս կառույցը ղեկավարում է 1993թ. սեպտեմբերի 21-ից մինչև օրս:

իսլամի խորհրդանիշը՝ կանացի գլխաշորը, դարձել էր հասարակության, մամուլի, քաղաքական գործիչների թիվ մեկ նյութը։ Եվ ահա Հալաչօղլուի հայտարարությունը զգալի չափով թուլացրեց հասարակական սևեռվածությունը գլխաշորի թեմայի վրա։ Այդ նպատակին հասնելու համար ընտրված թեման՝ Հայկական հարցը, գրեթե միշտ կտա սպասված արդյունքը։ Ընդ որում՝ ներկայումս պետական քարոզչություն է տարվում, որ թուրքերը ստիպված են պայքարել ոչ միայն բացահայտ հայերի, այլև հենց իրենց՝ թուրքերի մեջ գործող ծպտյալ հայերի դեմ, որոնք նաև համագործակցում են քրդերի հետ՝ երկիրը մասնատելու համար։

Հալաչօղլուի հայտարարությունը և դրա լայն արձագանքը մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ կրոնափոխ և ծպտյալ հայերի թեման գտնվում է թուրքական տարբեր շրջանակների ուշադրության կենտրոնում, որոնք արդեն սկսել են դա օգտագործել և շահարկել։ Միևնույն ժամանակ, չի կարելի բացառել, որ «պալատական» պատմաբանի հիշյալ հայտարարությունը կարող էր ունենալ այդ օրերի քաղաքական զարգացումներից հասարակության ուշադրության կենտրոնացումը թուլացնելու նպատակ։

Ռուբեն Մելքոնյան
«Նորավանք» հիմնադրամ

АРМЯНСКАЯ ОБЩИНА РОСТОВСКОЙ ОБЛАСТИ РОССИИ

В 1779г. по приглашению Екатерины II из Крыма на Дон переселились более 12,5 тысяч армян, притесняемых турками в Крыму. Помимо желания защитить единоверцев-христиан, другой причиной переселения было желание русского правительства поскорее положить начало колонизации тогда еще безлюдного Новороссийского края. В четырех километрах от крепости Св.Дмитрия Ростовского армяне заложили город Нахичевань, основали пять сел: Мец Салы, Султан Салы, Топты, Несветай и Чалтырь. Так на территории России была создана уникальная колония, внутренняя жизнь которой основывалась на национальных законах и традициях.

Ростовская область исторически многонациональна. На ее территории проживают представители более 100 национальностей и народностей. Большинство из них проживает дисперсно на всей территории области. Ряд этносов, к которым относятся прежде всего армяне, имеют компактное расселение в отдельных населенных пунктах и районах области. Армяне компактно проживают в городах Ростов-на-Дону и Таганрог, в Мясниковском[1], Егорлыкском, Красносулинском, Целинском районах.

Как и в отношении Краснодарского и Ставропольского краев, в Ростовской области миграционные процессы после распада СССР привели к заметному изменению этнического состава населения области. В 2002г. миграционный прирост населения области увеличился в 2,5 раза по сравнению с 2001г. и составил более 2200 человек. По этническому составу среди мигрантов преобладали русские (71,5%), но в 2002г. значительно увеличилась доля армян (в 4,4 раза).

По данным всероссийской переписи населения 2002г. численность армян в Ростовской области составила 110 тыс. человек (2,5% от общего населения области). Армяне заняли третье место по численности после русских (89,3%) и украинцев (118,5 тыс. человек, 2,7%). Учитывая естественную убыль населения, которая особенно затрагивает славянское население области[2], значительное присутствие в Ростовской области лиц армянской национальности, не охватываемых официальным учетом, и прошедшие с момента проведения последней всероссийской переписи почти 5 лет, можно констатировать выход армян на второе место по численности в Ростовской области[3].

Состояние межнациональных отношений в Ростовской области характеризуется как стабильное и контролируемое органами власти и управления субъекта. Отмечавшиеся с 1989 по 2000гг. локальные конфликтные ситуации в местах компактного расселения вынужденных переселенцев к 2001г. были исчерпаны[4].

В структуре администрации области действует комитет по связям с политическими партиями, общественными объединениями и национальным отношениям. С 1992г. при администрации области действует Консультативный совет представителей общественных организаций национальных групп области. В его состав входят руководители 19 национально-культурных общественных организаций. Деятельность Совета направлена на рассмотрение любых вопросов, интересующих или беспокоящих национальные диаспоры и администрацию области.

---

[1] См. Приложение.

[2] По данным «микропереписи» в Ростовской области 1994 года 90% ее населения составили русские; 3,4% - украинцы (**в 1930-е годы они составляли около 30% -** *выделено автором*); 1,8% - армяне; 0,75% -белорусы; 0,38% - татары; 0,28% - цыгане; 0,23% - азербайджанцы; 0,23% - турки; 0,22% - чеченцы; 0,22% - турки-месхетинцы; 0,2% - грузины; 0,2% - евреи. (*Виктор Кирпаль,* Ростовская область: согласие заинтересованных сторон, http://www.auditorium.ru/books/359/r2gl4.pdf).

[3] Так уже на следующий после переписи год (2003) численность армян в Ростовской области оценивалась в 135 тыс. человек. («Հայ սփյուռք» հանրագիտարան: Հ.Մ.Այվազյան (գլխ. խմբագիր) եւ ուր., Եր., 2003, էջ 478).

[4] *Панорама культурной жизни регионов России в сети Интернет, Ростовская область* (Российская государственная библиотека НИЦ Информкультура), М., 2003, http://orel3.rsl.ru/regions/47.pdf.

В то же время, официальные источники информации по Ростовской области акцентируют внимание на том, что «Продолжают действовать факторы, которые в своей совокупности могут привести к возникновению межнациональной напряженности. Прежде всего, к ним относятся различные виды миграции: из ближнего зарубежья, нелегальная и легальная внешняя и внутренняя трудовая миграция. С южного направления прибывают граждане закавказских республик (Азербайджан, Грузия, Армения). Единовременное количество этих мигрантов, проживающих на территории области, можно приблизительно оценить в количестве 5-7 тысяч человек. В подавляющем большинстве они заняты нелегальной трудовой деятельностью на продовольственных рынках области»[1].

В Ростовской области сформирована и периодические заседает *Группа общественного сопровождения реализации приоритетных национальных проектов в Ростовской области*, в состав которой, в частности, входят представители некоторых национальных общин области. Это сопредседатель Ростовской региональной национально-культурной еврейской автономии Михаил Гельфер; президент Ростовской региональной общественной организации «Ассоциация корейцев Ростовской области» Михаил Ким и председатель совета Ростовской региональной общественной организации «Ново-Нахичеванская-на-Дону армянская община» Арутюн Сурмалян.

Уже в конце 1990-х – начале 2000-х гг. в экспертных кругах России, занимавшихся исследованием политических процессов на Юге России, стало формироваться мнение, что «среди национально-этнических объединений на первый план в Ростовской области выступает армянская община, представляющая национально-культурную автономию. Власти, особенно районные и городские, в большей степени опираются на армянскую диаспору, поэтому можно утверждать, что их влияние на политическую ситуацию, несомненно, присутствует»[2].

Помимо Ростова-на-Дону, институционально организованные армянские общины существуют и в других крупных городах области. В г.Таганрог образована армянская община «Наири» (руководитель – Сирвард Гамбарян, с 2004г. временно приостановила свою деятельность), в г.Новочеркасск армянская община «Ани» (руководитель – Мадлен Согомонян).

В области издается двуязычная газета «Нахичевань-на-Дону».

С 2002г. в Интернете размещен независимый информационно-аналитический портал «Нахичевань-на-Дону» (http://nnd.politnet.ru). Ныне информационно-аналитический портал «Нахичевань-на-Дону» является крупнейшим этническим интернет-проектом в Ростовской области.

Одним из примеров эффективной интеграции армян в общественно-политическую и социально-культурную жизнь области и показателем тесного сотрудничества региональных властей и местных армянских общин стала передача в пользование Армянской Апостольской Церкви со стороны администрации Ростовской области здания церкви бывшего монастырского комплекса «Сурб Хач» (20 марта 2007г.). До последнего времени в стенах церкви располагался Ростовский музей русско-армянской дружбы, действовавший с 1972 года и насчитывающий более 10 тысяч экспонатов[3].

Михаил Агаджанян

---

[1] *Национальные отношения*, http://www.donland.ru/content/info.asp?partId=4&infoId=3900&topicInfoId=3900 (сайт администрации Ростовской области).

[2] *Политическая ситуация в Ростовской области, Основные игроки/группы и их интересы* (Стартовый аналитический обзор, 2003), http://www.allianc.ru/analytics_start.htm.

[3] В связи с восстановлением монастырского комплекса ростовской администрацией было принято решение, что музей должен покинуть стены церкви. В связи с этим местная армянская община предложила построить для музея новое здание на территории восстанавливаемого монастырского комплекса. Церковь монастыря «Сурб Хач» была построена в 1786-1792гг. (*В Ростове-на-Дону будет восстановлен армянский монастырский комплекс «Сурб Хач»*, http://www.regnum.ru/news/801658.html, 24.03.2007).

«Валерий Гелас, заместитель министра культуры Ростовской области – начальник отдела охраны объектов культурного наследия заявил, что к 2009 году будет отремонтировано здание бывшей библиотеки им. Пушкина, выделенное под музей русско-армянской дружбы. Его площадь составляет 554,3 кв.м. по сравнению с 190 кв.м. Сурб-Хача» (*Ростов-на-Дону. Пресс-конференция «Судьба ростовского музея русско-армянской дружбы «Сурб-Хач»»*, ИА Росбалт, http://www.rosbalt.ru/2007/4/10/290494.html, 22.03.2007).

Мясниковский район Ростовской области можно считать «армянским анклавом» на территории самого северного субъекта Северного Кавказа. Количественное и качественное присутствие армян в этом районе схожи с теми же параметрами на территории Георгиевского района Ставропольского края.

Мясниковский район – административная единица в составе Ростовской области, территория которого непосредственно примыкает к областному центру – городу Ростову-на-Дону. Административный центр района – село Чалтырь. Территория района составляет 880 кв. км. Всего в районе насчитывается 23 населенных пункта; сельских администраций – 8. Главой администрации района является Хачатур Аносян. Население района составляет около 37,4 тыс. человек (по данным переписи 2002г.). Большинство населения района (около 60%) составляют армяне.

Заселение армянами земель этого района относится к концу XVIII века. В 1780г. тысячи армян прибыли на новое место жительства, основав город Нахичевань (с 1928г. объединившийся в один город с Ростовом-на-Дону) и пять сел: Чалтырь, Крым, Большие Салы, Султан-Салы и Несветай. Все эти села находятся на территории нынешнего Мясниковского района, образованного в 1926г. решением Большого Президиума Донисполкома, который постановил выделить из состава Аксайского района Армянский район, отвечающий непосредственному желанию армянского населения Донского округа, с административным центром в городе Нор-Нахичеван и вышеназванными пятью армянскими селами. Район был назван в честь погибшего незадолго до того в авиационной катастрофе крупного политического и государственного деятеля большевистской партии, уроженца города Нор-Нахичеван Александра Мясникова (Мясникяна). С мая 1926г. по 1928г. центром района был город Нор-Нахичеван. С конца 1928г. центром района было село Крым, а с сентября 1929г. и по сей день райцентром является село Чалтырь.

Сегодня Мясниковский район – один из наиболее экономически крепких в Ростовской области. Основу экономики Мясниковского района составляет сельское хозяйство. В этой сфере работает большинство трудоспособного населения, действуют 8 крупных сельхозпредприятий и более 500 фермерских хозяйств. Через район проходит федеральная автомобильная дорога Воронеж-Ростов-Мариуполь и железная дорога со станцией Хапры, связывающая Ростов-на-Дону и Таганрог. Все населенные пункты района связаны с райцентром дорогами с твердым покрытием.

В целом, являясь сегодня «воротами» России в страны Черноморского и Прикаспийского бассейнов, Ростовская область обладает мощнейшей на Юге транспортной инфраструктурой, представленной железнодорожными и автомобильными магистралями федерального значения, морскими и речными портами в Ростове, Азове, Таганроге, международным аэропортом в Ростове-на-Дону. Через Ростовскую область проходит 9/10 пассажироперевозок и 4/5 грузоперевозок Кавказского региона[1].

[1] Агентство инвестиционного развития Ростовской области, http://www.ipa-don.ru/presentation/1.

ՀՐԵԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻՑ.
ԱԼԻՅԱ. 1

Ալիյա *(Aliyah)* բառը եբրայերեն (իվրիտ) լեզվում նշանակում է «վերելք», «վեր բարձրանալ» և օգտագործվում է հրեաների ներգաղթը Պաղեստին և Իսրայել մատնանշելու համար: Այն լայն առումով հրեական մշակութային կոնցեպտ է, հայացքների հիմնարար համակարգ սիոնիզմի տեսության մեջ, ինչպես և ամրագրված է Իսրայելի Վերադարձի օրենքում *(Law of Return),* որն իրավունք է վերապահում ցանկացած հրեայի ներգաղթել, ստանալ համապատասխան օժանդակություն և բնակվել Իսրայելում, ինչպես նաև ավտոմատիկորեն ստանալ Իսրայելի քաղաքացիություն: Ալիյան այս համատեքստում ունի ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր իմաստ. մասնավորապես, բոլոր հրեաները կրթված են այն հավատով, որ այս «վերելքը» հուդաիզմի էական մասն է կազմում: Շատ հրեաներ դիտում են ալիյան իբրև վերադարձ դեպի Ավետյաց երկիր, որպես Աստծո աստվածաշնչային խոստման, որ տրվել էր եբրայական նահապետներ Աբրահամին, Իսահակին ու Հակոբին, իրականացում՝ նրանց ժառանգների նկատմամբ:

«Ալիյա» տերմինը ներառում է ինչպես կամավոր ներգաղթ գաղափարական, զգացմունքային կամ գործնական պատճառներով, նույնպես և հալածական հրեա բնակչության զանգվածային ներգաղթ: Մերօրյա իսրայելցի հրեաների գերակշռող մեծամասնության համար իրենց տոհմի արմատները գտնվում են երկրից դուրս: Մինչդեռ հրեաներից շատերն ընտրել են բնակությունը Իսրայելում, շատերն էլ ընդհանրապես հնարավորություն չունեն լքելու իրենց բնակության երկիրը: Իսրայելը սովորաբար ճանաչված է որպես «ներգաղթողների երկիր», սակայն այն, լայն առումով, ինչպես կերևա ստորև, նաև արտագաղթողների երկիր է:

Ալիյան ընթացել է մի շարք փուլերով: Դրանցից յուրաքանչյուրի կողմից բերված ավանդույթները, փորձը անգնահատելի արժեք են ունեցել այն գործում, որ Իսրայելը դառնա բազմակարծիք, ժողովրդավարական հասարակություն արդիական տնտեսությամբ:

Իրենց արտաքսմանը հաջորդող ժամանակներում, ինչպես նաև 70թ. Երուսաղեմի անկմանը հաջորդող դարերի ընթացքում, հրեաների մեծամասնությունը ցրվեց աշխարհով մեկ: Հրեական ազգային գաղափարը երբեք, սակայն, չէր հրաժարվել հայրենիք վերադառնալու մտքից: Դարերի ընթացքում հրեաները պահպանում էին իրենց ներկայությունը Պաղեստինում, իսկ չընդհատվող կապն արտերկրում բնակվող հրեաների հետ մեծապես հարստացնում էր երկու համայնքների մշակութային, հոգևոր և մտավոր կյանքը:

Հրեական սփյուռքից Պաղեստին վերադարձող հրեաների թիվը նշանակալիորեն աճեց 13-19-րդ դարերի ընթացքում, ինչը մեծապես պայմանավորված էր Եվրոպայով մեկ հրեաների նկատմամբ տարվող մերժողական քաղաքականությամբ ու հետևանք էր կրոնական հետապնդումների: Դրանց դրսևորումներն էին հրեաների վտարումն Անգլիայից (1290), Ֆրանսիայից (1391), Ավստրիայից (1421), Իսպանիայից (1492): Սիոնիզմը, որն իրենց հայրենիք հրեաների վերադարձն ապահովող քաղաքական շարժում էր, ձևավորվում է 19-րդ դարի երկրորդ կեսին: Ի պատասխան հրեաների նկատմամբ Արևելյան Եվրոպայում շարունակվող ճնշումներին ու հալածանքներին, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայում նրանց ձուլման գործընթացներին և ոգևորված սիոնիստական գաղափարախոսությամբ՝ 19-րդ դարի վերջերից հրեաները սկսեցին ներգաղթել Պաղեստին, որն այդ ժամանակ Օսմանյան կայսրության կազմում էր: Դա նոր ժամանակների ալիյայի առաջին ալիքն էր՝ կազմակերպված ոչ փորձառու իդեալիստների կողմից: Ներգաղթողների մեծամասնությունը Ռուսական կայսրությունից էր, մասամբ նաև Եմենից: Ներգաղթողների զգալի մասը հիմնադրեց գյուղատնտեսական համայնքներ՝ մոշավոտներ, հողի մասնավոր սեփականության վրա հիմնված ֆերմերների գյուղեր: 1882թ. եմենցի հրեաները Երուսաղեմի Հին քաղաքի պատերից հարավ-արևելք հիմ-

նեցին նոր արվարձան. նրանք սկզբում աշխատում էին իբրև շինարարության բանվորներ, ավելի ուշ՝ մոշավոտների ցիտրուսային պլանտացիաներում: Առաջին ալիյայով եկածները հանդիպեցին մեծ դժվարությունների: Նրանց կողմից հնչած օժանդակության խնդրանքին արձագանքեց բարոն Էդմոնդ դը Ռոտշիլդը, որը մոշավոտների բնակիչներին տվեց տնտեսական աջակցություն՝ այդպիսով կանխարգելելով նոր բնակավայրեր հիմնելու գործի տապալումը:

Ամբողջությամբ վերցրած՝ *Առաջին ալիյայի* ընթացքում մոտ 35 հազ. հրեաներ ներգաղթեցին Պաղեստին: Նրանց շուրջ կեսը լքեց երկիրը հաջորդող մի քանի տարիների ընթացքում, սակայն մոտ 15 հազարը մնացին և հիմնադրեցին նոր գյուղական բնակավայրեր, մնացածն էլ տեղավորվեցին քաղաքներում:

Երկրորդ ալիյա, 1904-1914. Հրեաների՝ հայրենիք վերադարձի այս փուլն ընթանում էր ցարական Ռուսաստանում սկսված հրեական ջարդերի և հակասեմականության չդադարող դրսևորումների հենքի վրա: Ներգաղթողներից շատերը երիտասարդ մարդիկ էին՝ տոգորված սոցիալիստական գաղափարներով: Հետագայում Իսրայելում գոյատևող գյուղական բնակության տիպերի շատ բաղադրիչներ առաջ եկան հենց այս տարիներին, ինչպես, օրինակ, առաջին կիբուցը (1909) և առաջին հրեական ինքնապաշտպանական կազմակերպությունը Պաղեստինում, որ նպատակ ուներ պաշտպանել ներգաղթողներին արաբների աճող թշնամական վերաբերմունքի դրսևորումներից: Յաֆֆայի արվարձանում հիմնադրված բնակավայրը վերաճեց Թել Ավիվի՝ առաջին ժամանակակից ամբողջովին հրեական քաղաքի: Եբրայերենն աստիճանաբար սկսեց ձեռք բերել հաղորդակցության լեզվի կարգավիճակ, դրանով սկսեցին հրատարակվել գրականություն ու թերթեր: Հիմնադրվեցին քաղաքական կուսակցություններ, ստեղծվեցին գյուղատնտեսական բանվորների կազմակերպություններ: Ձևավորվեց Յիշուվը *(Yishuv)*՝ հրեական համայնքը, որն ապագա պետականության հիմնարկեքի նախադրյալներից մեկը դարձավ:

Շուրջ 40 հազ. հրեաներ ներգաղթեցին Երկրորդ ալիյայի ընթացքում, սակայն ինտեգրման դժվարությունները և կայուն տնտեսական հենքի բացակայությունը ստիպեցին նրանց մոտավորապես կեսին լքել երկիրը: Այս փուլի ավարտը պայմանավորված է Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնավորմամբ:

Երրորդ ալիյա, 1919-1923. Ներգաղթի այս փուլը սկզբնավորվեց ի հետևանս Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխության, Ռուսաստանում, նաև Լեհաստանում ու Հունգարիայում ընթացող հրեական ջարդերի ազդեցությամբ: Այս ալիյայի ընթացքում շուրջ 40 հազ. հրեաներ, հիմնականում Ռուսաստանից, ժամանեցին Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում բրիտանացիների կողմից նվաճված Պաղեստինի տարածք: Ներգաղթյալներից շատերը վերապատրաստված էին գյուղատնտեսական գործունեության մեջ և ի վիճակի էին հիմնել ինքնաբավ տնտեսություններ: Ներգաղթողները կառուցում էին նաև ճանապարհներ, քաղաքներ, իրականացնում էին ճահիճների չորացում և այլն, ինչի շնորհիվ նշանակալի տարածքներ սկսեցին օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով, գյուղատնտեսական նշանակության բնակավայրերն ընդարձակվեցին, հիմնվեցին առաջին արդյունաբերական ձեռնարկությունները: Չնայած բրիտանական վարչակազմի սահմանած ներգաղթային քվոտաներին՝ Երրորդ ալիյայի վերջում հրեաների թիվը Պաղեստինում հասավ 90 հազ. մարդու: Ձևավորվեցին նոր ազգային հաստատություններ, նաև ներկայացուցչական մարմիններ, ինչպես, օրինակ, Ընտրովի ժողով *(Elected Assembly),* Ազգային խորհուրդ *(National Council),* հրեական կիսառազմական կազմակերպություն՝ *Haganah,* որը գործեց մինչև 1948թ.: Այս փուլում ներգաղթողներից համեմատաբար քչերը լքեցին Պաղեստինը:

Չորրորդ ալիյա, 1924-1929. Ներգաղթի այս ալիքը հետևանք էր մի շարք հանգամանքների, այդ թվում՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի, Լեհաստանում տարվող հակահրեական քաղաքականության, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից հրեաների ներգաղթի հարցում գործադրվող քվոտաների խիստ քաղաքականության: Ներգաղթողների մեծ մասը միջին դասի ներկայացուցիչներ էին և իրենց հետ բերում էին համեստ կապիտալ, ինչը նրանց հնարավորություն էր տալիս հիմնադրելու լոկ փոքր բիզնես և արհեստանոցներ: Այդ տարիներին ընդլայնվեց Թել Ավիվը: Չնայած ճգնաժամով պայմանավորված տնտեսական դժվարություններ-

ին՝ Չորրորդ ալիյան նպաստեց հրեաբնակ քաղաքների հզորացմանը, դրանց հետագա արդյունաբերական աճին, շարունակվեց գյուղական բնակավայրերի ամրապնդման գործը։

Ընդհանուր առմամբ, Չորրորդ ալիյայի ընթացքում 82 հազ. հրեաներ ժամանեցին Պաղեստին, որոնցից 23 հազարը (28%) հետ վերադարձան։

Հինգերորդ ալիյա, 1929-1939. Այս փուլի սկիզբը համընկնում է Գերմանիայում նացիստների իշխանության գալու գործընթացին։ Հրեաների հալածանքները, նրանց գնալով ահագնացող վիճակը նպաստեցին այն բանին, որպեսզի ընդարձակվի Գերմանիայից իրականացվող ալիյան և վերսկսվի այդ գործընթացն Արևելյան Եվրոպայից։ Գերմանիայից ներգաղթողների մեծ մասը մասնագետներ էին, նրանց ազդեցությունը պետք է որ շուտով զգացվեր տնտեսության տարբեր ոլորտներում։ Ընդամենը չորս տարվա ընթացքում՝ 1933-1936թթ., 174 հազ. հրեաներ հաստատվեցին Պաղեստինի տարածքում։ Հիմնվեցին նոր արդյունաբերական ձեռնարկություններ, քաղաքները ծաղկում ապրեցին, Հայֆայի նավահանգստի ու նավթի վերամշակման գործարաններն ամբողջացվեցին։ Ողջ երկրով մեկ միայն 1936-1939թթ. ընթացքում հիմնվեցին «պարիսպ և աշտարակ» *("stockade and tower")* անվանվող, այսինքն՝ ամրացված բնույթ ունեցող շուրջ 60 բնակավայրեր։ Այս գործընթացը հետևանք էր առաջին հերթին այն բանի, որ այդ ժամանակ աճել էին հարձակումները հրեաների նկատմամբ, ինչը բրիտանական վարչակազմի կողմից ներկայացվում էր սոսկ որպես «խախտումներ, հուզումներ», և դրանք կանխելու համար բրիտանացիները բավարար կտրուկ միջոցներ ձեռք չէին առնում։

Նոր տիպի բնակավայրերի չափերը 35x35 մետր էին, դրանք կառուցվում էին արդյունաբերական եղանակով պատրաստված փայտյա կառուցվածքներից և շրջապատվում էին խճով լցված փայտե կրկնակի պաշտպանական պատով, ինչը թույլ կտար պաշտպանվել հրազենից։

Բրիտանական կառավարությունն այդ տարիներին արգելակում էր ներգաղթը, ինչի հետևանքով տեղ գտավ, այսպես կոչված, Ալիյա-Բեթը *(Aliya-Bet),* այսինքն՝ ոչ օրինական, գաղտնի ներգաղթը։ Արդյունքում՝ Հինգերորդ ալիյայի ընթացքում, մինչև 1940թ., շուրջ 250 հազ. հրեաներ ներգաղթեցին (նրանցից ընդամենը 20 հազարը կամ 8%-ը հետագայում հետ վերադարձան), և Ցիշուվի բնակչությունը հասավ 450 հազ. մարդու։ Այս ժամանակից սկսած՝ դադարեց ներգաղթի ալիքների համարակալումը, ինչը, սակայն, չէր նշանակում, թե ալիյաները սպառեցին իրենց։

Երիտասարդական ալիյա (Youth Aliya). Հիմնադրվել է 1933թ.՝ փրկելու համար նացիստական Գերմանիայի հրեա երիտասարդությանը։ Այս ծրագրով, մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելը, հաջողվեց Պաղեստինի տարածք տեղափոխել շուրջ 5 հազ. պատանիների։ Նրանք կրթվեցին ալիյայի երիտասարդական պանսիոնային բնույթի դպրոցներում *(Youth Aliya boarding schools):* Հետագայում նրանց ավելացան Հոլոքոստը վերապրած ևս 15 հազ. երիտասարդներ։ Այսօր նույնպես *Youth Aliya* դպրոցները շարունակում են կենսականորեն կարևոր դեր խաղալ նորեկ երիտասարդության ինտեգրման գործում։

Ալիյան Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և դրանից հետո, 1939-1948. Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների ալիյայի կազմակերպիչների ջանքերն ուղղված էին նացիստների կողմից օկուպացված Եվրոպայում հրեաներին փրկելու գործին։ Նրանց որոշ մասը Պաղեստինի տարածք էր ներթափանցում՝ օգտվելով բրիտանական վարչակազմի կողմից սահմանված 75 հազ. քվոտայի տրամադրած հնարավորություններից *(«White Paper» quota),* սակայն մեծամասնությունը գալիս էր իբրև անօրինական ներգաղթող։ Այս ներգաղթը, որն, ինչպես վերը նշվեց, անվանվեց *Aliya Bet,* իրականացվում էր ցամաքով և ծովով, Եվրոպայից և Միջին Արևելքից, ի խախտումն մանդատային կառավարության հրամանների։ Շատ նավեր, որ ժամանում էին Պաղեստին, հետ էին ուղարկվում բրիտանական իշխանությունների կողմից, ինչի հետևանքով ոչ քիչ թվով հրեաներ կորցրին իրենց կյանքը ծովում։

1944-1948թթ. Արևելյան Եվրոպայի հրեաները ստիպված էին բոլոր հնարավոր միջոցներով հեռանալ այդ երկրներից։ Ցիշուվի էմիսարները, հրեա պարտիզանները, սիոնիստական երիտասարդական կազմակերպությունները համագործակցում էին հրեաներին փրկելու

գործում «Փախուստ» *(Beriha)* կազմակերպության միջոցով, որն օգնեց շուրջ 200 հազ. հրեաների լքել Եվրոպան։ Նրանց մեծամասնությունը բնակություն հաստատեց Պաղեստինում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մինչև Իսրայել պետության ստեղծումը (1945-1948թթ.) անլեգալ ներգաղթը հայրենիք վերադառնալու գլխավոր ձևն էր, քանի որ բրիտանական իշխանությունը, հաստատելով տարեկան միայն 18 հազ. մարդու ներգաղթի հնարավորություն, էապես սահմանափակում էր օրինական ներգաղթը (ցանկացողներն ավելին էին)։ Այդ տարիներին դեպի Պաղեստին կազմակերպվեց վաթսունվեց անլեգալ նավարկություն, սակայն դրանցից մի քանիսին միայն հաջողվեց հաղթահարել բրիտանական բլոկադան և ուղևորներին ափհանել։ Միայն 1947թ. շուրջ 45 հազ. ներգաղթյալներ հետ ուղարկվեցին Եվրոպա մանդատային կառավարության կողմից։ Բրիտանացիները նրանց նավակները կանգնեցնում էին ծովում, հետ ուղարկում Կիպրոսում ստեղծված հատուկ ճամբարներ, որտեղից նրանցից շատերը կարողացան ժամանել Իսրայել միայն պետության կազմավորումից հետո։ Ինչևիցե, շուրջ 80 հազ. ոչ լեգալ ներգաղթյալներ եկան ու հաստատվեցին Պաղեստինում 1945-1948թթ.։ Ընդհանուր առմամբ, բրիտանական ղեկավարման ողջ ժամանակահատվածում լեգալ և անլեգալ ներգաղթյալների թիվը կազմում է շուրջ 480 հազ. մարդ, որոնց մոտ 90%-ը՝ Եվրոպայից։ Այնպես որ, Յիշուվի (Պաղեստինի հրեական համայնքի) բնակչությունը՝ պետության կազմավորմանը նախորդող ժամանակահատվածում, հասել էր 650 հազ. մարդու։

Հարություն Մարության
«Նորավանք» հիմնադրամ

ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

2007թ. մարտի 14-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը: Այս օրենքի ընդունումն էական էր մի շարք առումներով, որոնց կանդրադառնանք ստորև: Մինչ այդ մի փոքր հետ գնալով փորձենք հիշել, թե ինչպես էին կարգավորվում եկեղեցու և պետության հարաբերությունները:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ՀՍՍՀ առաջին Սահմանադրությունը (1922թ.) հռչակել էր եկեղեցու անջատումը պետությունից և դպրոցի անջատումը եկեղեցուց: 1943-ին ձևավորվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհուրդը, որը կրոնի նկատմամբ պետական քաղաքականությունն իրականացնող թերևս միակ մարմինն էր, հսկում էր կրոնական պաշտամունքների վերաբերյալ օրենսդրության կիրառումը, իրականացնում պետական և կրոնական կազմակերպությունների միջև կապը և այլն: ՀՍՍՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը երաշխավորում էր խղճի ազատություն, այսինքն՝ ցանկացած կրոն դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու իրավունք: Կրոնական միավորումների մասին ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1977թ. ապրիլի 28-ի հրամանագրի համաձայն՝ իրենց կրոնական պահանջմունքները բավարարելու նպատակով հավատացյալները (18 տարեկանից բարձր) կարող էին միավորվել համայնքների կամ խմբերի մեջ:

Եթե մինչև խորհրդային կարգերի հաստատումը Հայ Առաքելական սուրբ եկեղեցու հոգևոր գործառույթներն ընդգրկում էին նաև հասարակական-քաղաքական, ազգապահպան և այլ ոլորտները, խորհրդային կարգերի հաստատումից հետո փոխվեց եկեղեցու գործառույթը. այն հիմնականում զբաղվում էր հավատացյալների կրոնական պահանջմունքների բավարարմամբ: Եկեղեցին պետության նկատմամբ վարում էր չեզոք քաղաքականություն: Հայրենական պատերազմի տարիներին, այնուամենայնիվ, եկեղեցու դերը փոքր-ինչ կարևորվեց: Եկեղեցին կատարում էր հանգանակություններ՝ հօգուտ երկրի պաշտպանության ֆոնդի, եկեղեցու գործուն մասնակցության շնորհիվ ակտիվացավ հայրենադարձության գործընթացը 1946-ին:

Երրորդ հանրապետությունում, 1991 թվականից ի վեր, եկեղեցի-պետություն հարաբերությունները դինամիկ ընթացք ստացան: Եվ բնական ջերմ փոխհարաբերությունների պայմաններում էլ փորձ է արվում լուծել եկեղեցու և պետության միջև առկա բոլոր հիմնահարցերը: Սակայն պետության և եկեղեցու փոխադարձ հարգալից շփումներով պայմանավորված փոխհարաբերությունները, որպես կանոն, բնորոշ են այնպիսի երկրներին, որոնք կրոնական դաշտի կարգավորումն օրենսդրորեն իրականացնելու փորձ չունեն: 1991թ. հունիսի 17-ին ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը պետության կողմից եկեղեցու հանդեպ վերաբերմունքի արտահայտություններից կարելի է համարել: Սակայն այս օրենքն, իր բոլոր առավելություններով հանդերձ, ուներ մեկ հիմնական բաց՝ Հայ Առաքելական եկեղեցին համահավասարեցվում էր կրոնական մյուս կազմակերպություններին: «Կրոնական կազմակերպություն» հասկացության ներքո ընկալվում են բոլոր այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են կրոնական գործունեություն և չի բացառվում, որ կրոնական գործունեություն իրականացնող կազմակերպությունների մեջ լինեն այնպիսիք, որոնք ի սկզբանե քրիստոնեական հիմնական վարդապետությունները չընդունելու պատճառով ավանդական եկեղեցիների կողմից դիտարկվում են որպես աղանդավորական կազմակերպություններ: Այս առումով անթույլատրելի էր, որ եկեղեցին համահավասարեցվեր նման կարգավիճակ ունեցող, ավանդական եկեղեցիների կողմից «աղանդավորական» գնահատականին արժանացած կրոնական կազմակերպություններին և նրանց հետ դրվեր միևնույն սանդղակին: Այս կրոնական կազմակերպությունների մեջ ներառված են նաև

ավանդական մեր քույր եկեղեցիները, Հայաստանում համայնք ունեն ասորիները, ռուսները, կաթոլիկները: Հետևաբար, անկարելի է արդարացի նկատել այդ գնահատականը, որ Հայ Առաքելական եկեղեցին, Ռուս Ուղղափառ եկեղեցին, կաթոլիկ եկեղեցին կարող են միևնույն սանդղակի վրա հայտնվել կրոնական այնպիսի կազմակերպությունների կողքին, որոնք ի սկզբանե աղանդավորական գործելաոճ ունեն:

Մայր Աթոռ Ս.Էջմիածնի դիվանապետ, գերաշնորհ տեր Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի դիտարկմամբ, այլ երկրների կրոնական օրենսդրության պրակտիկայում ազգային եկեղեցիները հստակորեն տարանջատվում են տվյալ երկրի տարածքում գործող մյուս եկեղեցիներից, առավել ևս՝ կրոնական այնպիսի կազմակերպություններից, որոնք առնչություն չեն ունեցել իրենց ժողովրդի ինքնության, պատմության կերտման գործընթացների մեջ: Այս առումով օրենքը եկավ լրացնելու այդ բացը, շեշտելու, որ հայ ժողովրդի ազգային մշակույթի, ինքնության պահպանման գործում կարևոր դերակատարություն է ունեցել Հայ Առաքելական եկեղեցին և որ հայ ժողովրդի կյանքի, ապագայի մեջ այն նաև շարունակելու է ունենալ նույն կարևոր դերակատարությունը:

Այնուամենայնիվ, կարելի՞ է «ՀՀ և Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը համարել ուշացած, քանի որ, փաստորեն, մինչ այդ եկեղեցի-պետություն հարաբերությունները հիմնականում կանոնակարգվում էին միայն «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքով: Արշակ սրբազանի համոզմամբ՝ 1991թ. ավելի դյուրին էր ի նպաստ եկեղեցու որևէ օրենսդրական նախաձեռնություն անցկացնել, որովհետև այդ շրջանում մեր պետությունը կաշկանդված չէր եվրոպական կառույցներին ինտեգրվելու ճանապարհին առաջացած պայմաններով: «Սակայն եվրոպական կառույցներին ինտեգրվելու մեզ առաջարկված պայմանների համատեքստում չափազանց ողջունելի ու չափազանց բարդ քայլ էր՝ կյանքի կոչել նման մի նախաձեռնություն: Եկեղեցու և պետության միջև առկա հարաբերությունների ջերմությունն ու եկեղեցու ընկալվածությունը պետության կողմից՝ որպես ազգային եկեղեցի, ոչ թե իրավական դաշտում, այլ պարզապես մարդկանց մտայնություններում, ևս իր դերակատարությունն ունեցավ, որ բոլոր կարգի փոխհարաբերությունները միայն իրավական դաշտի մեջ ձևակերպումներ չստանան: Եկեղեցին օրենսդրական նախաձեռնություններով և օրենքներով չէ, որ իր դերակատարությունը, իր ներկայությունը, իր հեղինակությունը պետք է հաստատի հասարակության մեջ: Ոչ ոք չունի այն միամիտ լավատեսությունը, թե օրենքներով եկեղեցու առաքելությունը շատ ավելի արդյունավետ կդառնա, քան դա հնարավոր է անել անմիջական աշխատանքի շնորհիվ: Բայց յուրաքանչյուր աշխատանք սկսելուց առաջ հայտնի է, որ կա հեղինակության հաստատման խնդիր, և պետության կողմից եկեղեցու հեղինակության վերահաստատմանն ուղղված այս քայլը (2007թ. օրենքը) ողջունելի և լավ խթան է եկեղեցու կողմից՝ իր առաքելությունն առավել արդյունավետ իրականացնելու ուղղությամբ: Սակայն ցայսօր կան բազմաթիվ հարցեր պետության և եկեղեցու միջև, որոնք կարոտ են օրենսդրական կարգավորման»:

ԱԺ կողմից օրենքի ընդունման ճանապարհով մի շարք հարցերի լուծումներ տալը հնարավորություններից միայն մեկն է: Մեկ այլ ճանապարհ է տարբեր հարցերին կառավարության որոշումներով, ենթաօրենսդրական ակտերով եկեղեցու և պետության ներկայացուցիչների համատեղ քննարկումների արդյունքում լուծումներ տալը: Ըստ հոդված 9-ի՝ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է ՀՀ կառավարության և ՀԱՍԵ-ի միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան Առաքելական եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործված ամուսնություններն ու հռչակված ամուսնալուծությունները»:

Օրենքում ամրագրված է նաև, որ պետությունը ճանաչում է եկեղեցական խոստովանության գաղտնիությունը: Այն է՝ մեր եկեղեցու հոգևորական խոստովանահայրը՝ որպես վկա, չի կարող հարցաքննվել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ: Օրենքը Հոդված 11-ով եկեղեցուն շնորհում է նաև հարկումից ազատ եկամուտներ: Այսինքն՝ եկեղեցին ունի իրավունք կազմակերպելու հասարակական դրամահավաքներ և ստանալու նվիրատվություններ ու ընծաներ, որոնք ազատ են հարկումից: Հարկումից ազատ են նաև ծիսական նշանակության առարկաների արտադրությունն ու իրացումը:

Եկեղեցու և պետության միջև կարգավորման կարոտ հարցերից է, օրինակ, հայկական եկեղեցական ճարտարապետությանը բնորոշ լուծումների կիրառությունը կրոնական այլ կազմակերպությունների կողմից: Այսօր Հայաստանում կան կրոնական կազմակերպություններ, կրոնական գործունեություն իրականացնող խմբեր, որոնք հասարակության մեջ շփոթություններ առաջացնելու, Հայ Առաքելական եկեղեցու հետ նույնականության պատրանք ստեղծելու նպատակով փորձում են կիրառության մեջ դնել եկեղեցու ճարտարապետությանը բնորոշ մանրամասներ: Օրինակ՝ զանգակատների կառուցումը: Այսօր նկատելի է զանգակատների գործածությունը նաև աղանդավորական գործունեություն իրականացնող կրոնական կազմակերպությունների պաշտամունքային շինություններում: Նման գործելաոճ դրսևորել է, օրինակ, ավետարանական համայնքը: Բողոքական, ավետարանական եկեղեցիներն ընդհանրապես աչքի չեն ընկնում խաչի գործածությամբ, եթե չասենք հակառակը՝ նրանք չեն ընդունում խաչի խորհուրդը, սակայն խաչի գործածության միջոցով փորձում են նույնականության պատրանք ստեղծել և շփոթության մեջ գցել հավատացյալներին՝ այն իրենց շինություններում տեղադրելով:

Որևէ ճանապարհով դեռևս կարգավորված չէ կենցաղային նշանակության ապրանքների վրա կրոնական, եկեղեցական խորհրդանիշերի, անվանումների կիրառության հարցը: Գովազդային հոլովակներում եկեղեցական խորհրդանիշերը, սրբերի անվանումներն իրենց միջավայրին ոչ բնորոշ կիրառության մեջ դնելը խնդիրներ է առաջացնում: Որպես օրինակ նշենք մսամթերք արտադրող ընկերություններից մեկի անվանումը՝ «Գեղարդ»: Պետք է հակազդեցության ճանապարհներ գտնել և, առհասարակ, կարողանալ գնահատել մեր սրբություններն ու նվիրական արժեքները:

Լիլիթ Ավագյան